



ՀԱՄԱԳԻՐ
ԿՐԾՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



ՊԱՇՏՆԱԿԱՆ ԷՄԻՆ ՀԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԱՅ ՊԱՏՐԱՐԻՈՒԹՅԱՆ

ՆՈՐ
ԵՐԶՈՆ 1954

ԽԵ.
ՏԱՐԻ

«سِيُون» مجلة أرمنية شهرية، أدبية، ثقافية، للغة والبيان

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	տես
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
— Սուրբ Խաչ Դպրեվանք.	37
ԿՐՕՆԱԿԱՆ	
— Հոգիին որոնումը.	Մ. Վ. 40
— Մոգերուն գալուստը եւ երկրագութիւնը.	ՊԱՐԳԵՒ ՎՐԻ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ 42
ԲԱՆԱՍՏԵՂԺԱԿԱՆ	
— Անցորդն այս վերջին.	ԶԱԼԷՆ Ա. Զ. 44
— Յուդարկ.	Քրգմ. Ե. 44
— Քառեակներ.	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ 45
—	» » 45
— Մեծ - մայրերուս յիշատակին.	ՄԱՌԻ ԱԹՄԱՆԵԱՆ 46
ԳՐԱԿԱՆ	
— Մկրտիչ Պեռիկրաշեան (3).	Յ. ՕՇԱԿԱՆ 48
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
— Պատմութիւն Խորենացիի Քննադատութեան (3).	ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԷՆ 51
— Գիլգամեշի դիւցազներգութիւնը (4).	ԱՆՈՒՇԱԽԱՆ ԱԲՂ. ԶՂԶԱՆԵԱՆ 55
ԵԿԵՂԵՅԱ-ՊԱՏՄԱԿԱՆ	
— «Մեր նախնեաց հաւատք» նկատողութիւններ.	Ն. ԵՊՍ. ՆՈՎԱԿԱՆ 58
ԿՐՕՆԱ-ԲԱՐՈՅԱԿԱՆ	
— Աստուծո՛ւ ... եւ արդի մարդը (3).	HUBERT S. B. 61
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
— «Հին հայկական մանրանկարչութիւն».	Ն. ԵՊՍ. ՆՈՎԱԿԱՆ 63
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ	
— Եկեղեցական - Բեմական.	67
— Պատեօնական.	67
ՏԻՐՈՒՆԻ	
— Միաբան Ներսէս Նեմուզեան.	68
Բարեպաշտական նուէրներ.	68

ՍԻՈՆ-ի Տարեկան բաժնեգինն է՝
բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 20

Redaction of the Armenian Monthly SION
Armenian Patriarchate,
P. O. B. 4001
Old City - Jerusalem
Via Amman (Jordan)

—≡ Ս Ի Ո Ն ≡—

ԻՐ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1954

≡ ՓԵՏՐՈՒԱՐ ≡

ԹԻԻ 2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԽԱԶ ԴՊՐԵՎԱՆՔԸ

«Լուսաւորեա՛ ցեղապետ, զի հասեալ է լոյս քո»:

Մտքիս մէջ զուարթօրէն և նորիմաստ թափով մը կը հնչեն լոյսին և զայն փառաւորող անձին այս հոգեբոյ՝ Յիշողութեանս առջև անտառէն զատուող կաղնիի մը նման կը կենայ լուսաւորուած դէմքը Դուրեանին, որուն եւրոսաղէմի զահակալ ընտրուած օրը, Պատրիարքարանի դահլիճին մէջ սրտեռանդն երգուեցաւ այս շարականը: Ապա սիրտերը թունդ հանող իր պատգամը՝ սուրբ վրէժխնդրութիւն մը իրագործելու և ազգին ու եկեղեցիին համար պատրաստելու հոգեւոր զործիչներ: Եւ Սիոնի բարձունքին վրայ մաքուր ձեռքերով վառուած այդ սրբազան կրակը, տարիներու ընթացքին, պիտի կենսաւորէր ոչ միայն Աթոռը, այլ նաև լոյս և ջերմութիւն պիտի ջամբէր արտասահմանի մեր ժողովուրդին:

Անարիւն վրիժառութեան նոյն ոգիով և լուսահայց նոյն ջերմեռանդութեամբ, տասնեակ մը տարիներ վերջ, իր աշակերտներէն ուրիշ մը, Բարդէն Կաթողիկոս, Անթիլիասի աւագուտքին վրայ պիտի հիմնէր Դպրեվանքը Մեծի Տանն Կիլիկիոյ, որ Աստուծոյ շնորհիւ նոր հայրենիքի մը մէջ դեռ նոր ապաստան գտած և հազիւ ուշքի եկած Կիլիկիոյ հայութեան հոգեւոր մխիթարութեան և բարոյական վերակազմութեան սատարը պիտի հանդիսանար:

Այսօր նոյն ոգիի և սրբազան վրիժառութեան կրակը ուրիշ ընտրեալի մը միջոցաւ կը վառուի Սիւլեւտարի բարձունքին վրայ, Ս. Խաչ եկեղեցիին քովիլը, հոգեւոր լոյսի և առաջնորդութեան կարօտ Թուրքիոյ հայութեան կրօնական ու մտաւորական պէտքերուն ի հաշիւ:

Դուրեանի սերունդը, անոնք մանաւանդ որ հազարդակից մնացին իր հոգիին, փառքի հետամուտ չեղան և նուիրապետական բարձրագոյն օթոններու վրայ նստելէ աւելի զայն փառաւորել չանացին: Դահերը խաչեր նկատեցին և այդ ոգիով ու զգացումներով նայեցան իրենց ստանձնած պաշտօնին: Ամենապատիւ Տ. Գարեգին Ս. Պատրիարք Խաչատուրեանը Դուրեանական մըն է հոգիով ու պատրաստութեամբ: Իրմով այսօր Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռը

սչ միայն ընդհանուր և չկեմ ուշադրութեան առարկայ է, այլ մանաւանդ տակաւ իր ճշմարիտ դերին և իմաստին կը բարձրանայ, տարիներու անփառունակ լքումէ մը յետոյ: Հետեւաբար իր ընտրութիւնը սկիզբ մըն էր նոր իրադրութեան: ատիկա զգաց զգայուն, հոգեւէր և գիտուն Պատրիարքը, և առաջին մէկ օրէն իր ուշադրութեան առարկան բնաւ իմացական և հոգեկան շէնքին կառուցման հարցը, մտածելով այն ոգիին, որ բնաւ չպակսեցաւ մեր նրա իրապետական հաստատութիւններուն և կրօնական յարկերուն, վերածելով զանոնք լուսոյ վառարաններու և սրբութեան շնչարաններու:

Կ. Պոլսոյ հայութիւնը առաջին մէկ օրէն զօրավիզ հանգիսացաւ իր պետին և ուզեց արդիւնաւորել անոր զորքը հանրային բարեօրինակ և օգտին համար: Ոչ միայն ակնածանքով դիմաւորեց անոր անձը, յարգանքով լսեց զինքը և վստահութիւն ունեցաւ իր վրայ, այլ մանաւանդ յարգանքով ընդառնեց այն բոլոր ծրագիրներուն՝ զորս նորընտիր Պատրիարքը ունէր իր պաշտօնին և զայն փառաւորող զործին նկատմամբ:


Ուրախ ենք հոս յայտարարել կարենալու որ կարճ ժամանակամիջոցի մը մէջ, նորին Ամենապատուութիւն Գարեգին Պատրիարք, շնորհիւ իր շրջահայեաց և իմաստուն վարչականութեան, կրցաւ վերադառնալ տրտում իրադարձութիւններու բերումով հոգիներու մէջ աղօտացած յղացները, անգամ մը ևս ամրապնդելով մեր ժողովուրդին վստահութիւնը իր եկեղեցւոյ դերին և այդ դերը ստանձնողներու անձին շուրջ: Մեր ժողովուրդին սիրտը միշտ բաց է սրբազան ու հաւատարիմ ձայներուն, և Գարեգին Պատրիարք գերազանցօրէն հոգի մարդ է որ զիտէ յօժարեցնել բարի հոգիները, անոնցմէ առնելու համար անմահ իսկութիւնը արգաւանդ կեանքին:

Ահա թէ ինչու ժամանակի ոգիով ընթանալու և անոր աճող պահանջներուն դէմ կարենալ կենալու համար, չէին բաւեր միայն վարչական յանձանձումներ և կրօնական առօրեայ մատակարարումներ, որոնք արտաքին տուգնապններ միայն բաւարարել զիտեն, անհրաժեշտ է մտքի և հոգիի բարիքով ճոխացնել Աթոռը, այսինքն կառուցանել հոգեկան և իմացական շէնքը:

Լուսոյ այդ վառարանը իրականութիւն է այլևս, որուն պաշտօնական բացումը տեղի ունեցած է Բունուար 24ին, իսկ շէնքի և աշակերտներու պատրաստութեան և հաւաքման աշխատանքները տարիէ մը ի վեր ընթացք առած էին արդէն: Սրբազան Պատրիարք Հայրը զմայելի եռանդով և սիրով հսկեց շէնքի նորոգման, զբաղեցաւ աշակերտներու հաւաքման և զետեղման զործերով և դասարանի վերածելով նոյնիսկ Պատրիարքարանի սենեակներէն մին՝ ամիսներ առաջ արդէն սկզբնաւորեց կազմուող Գարեգինները:

Անոնք որ կը ճանչնան մտաւորական ու զրազէտ Պատրիարքը իր արժանիքներուն և իղձբուն անկեղծութեանցը մէջ և թուրքիոյ հայոց կրօնական կարիքն ու ժողովուրդին պէտքերը իրենց խորութեանը մէջ, ուրախութեան արցունքներով միայն պարտին դիմաւորել այս ձեռնարկը, այն խոր վստահութեամբ թէ նոր թուականի մը առաւօտն է որ կը ծաղի տարիներէ ի վեր ամայացած Կ. Պոլսոյ Աթոռին համար: Այս համոզումը ոչինչ ունի պատրոդական, վասնզի արդիւնք է ոչ միայն սիրելի զոացումի այլ սկզբունքի մը նոյն ատեն:

Այդ սկզբունքը այն մտածումն է ինքնին թէ համայնքներու մատուր ու



հողեկան կեանքի շինութիւնը նիւթական ազդակներէ աւելի կը կարօտի հոգեկան ուժերու, որոնք երևան կուգան բարոյական ու մտաւոր առաքինութիւններով օժտուած զործիչներու միջոցաւ։ Այս տեսակէտէն մտածելով զուցէ ոչ որ իրաւամբ պիտի կրնար իրազործել Պոլսոյ մէջ Գալբականքի մը անտեղիտալի պահանջը, բայց միայն Գալբականքի Պատրիարքը, որ այսկերպով կը վառէ հայ մտքին և հողիին կայծը Սկիւտարի բարձունքին վրայ, անցեալի յուշերով և ազգային նուիրականութիւններու զգացումներով այնքան հարուստ այդ վայրին մէջ։

Բարձրօրէն կենսական այս զործը, կը հաւատանք թէ սիրելի մտածումն է նաև Կ. Պոլսոյ հայութեան, որուն մէջ երբեք չէ լուծ հոգեկան և իմացական արժէքներու ձայնը։ Սփիւռքի մշուշներուն մէջ նստած մեր ժողովուրդը տակաւ կորսնցնելու վրայ է հայ ողիին յատկանիշները, զինք չընապատող ժողովուրդներու և մշակոյթներու մաշումին ենթակայ։ Վտանգի մէջ է մեր լեզուն, մեր աւանդութիւնը և մեր նաւարեկուած անցեալէն ազատազրուած արժէքները։ Ներկայ վիճակին մէջ Սփիւռքի մեր ժողովուրդի միակ փրկութիւնը դարձեալ եկեղեցին է։

Որդար պէտք է ըլլալ խոստովանելու թէ միայն հեռուոր անցեալի մէջ չէ որ Հայ եկեղեցին կատարած է այդ փրկարար դերը։ Հայութիւնը, 1840ին և 1860ին իր վերածնութիւնը թէ՛ Կովկասի և թէ՛ Թուրքիոյ մէջ անոր հովանիին տակ երկնեց։ Էջմիածնի ձեմարանէն մինչև Վարազն ու Արմաշը, մինչև Կ. Պոլսոյ Կեդրոնականն ու Պէրպէրեանը, որոնց մէջ թրծուեցան վերջին դարու հայ կեանքին մեծ արժէքները, Հայ եկեղեցւոյ մտածումն ու սէրն էր որ ողորդեց սիրտերն ու միտքերը մշտնջենաւորելու համար ազգային կեանքը։

Ընտանիք, լեզու, զարոց, մամուլ անշուշտ ազգապահպանման միջոցներ են, սակայն անոնցմէ վեր և միակը՝ եկեղեցին է։ Կ'ըսենք այսպէս ոչ յանուն նախընտրութեան մը, այլ այն խորունկ հաւատքով թէ յիշեալ ազդակները աւելի կամ նուազ չափով կը մնան ենթակայ ազաւաղման և նուաղման։ Հայ եկեղեցին մեր ազգային զեղեցկագոյն արժէքներու բիւրեղացումն է, զանոնք հողիացնող և լուսաւորող աստուածային կրակը, տուն տաղաւարը հայ մտքին ու հողիին։ Պատրաստել հետևաբար այդ եկեղեցիին համար արժանաւոր և իր կոչումին վայել պաշտօնեաներ, կենդանացնել Հայ եկեղեցւոյ բեմը և իր իրական հրայրքին ու հասկացողութեան տանիլ Հայ եկեղեցւոյ պաշտամունքի լեզուն, ծառայել է Հայ ժողովուրդի մտքի և հողիի զործին։

Ահա նախախնամական այդ զործն է որ նորին Ամենապատուութիւն Գալբականքի Պատրիարք Խաչատուրեան յղացաւ և իրազործեց Կ. Պոլսոյ մէջ, իբրև կրօնական ու կրթական ձեռնարկ, Ս. Խաչ Գալբականքի բացումով։ Որքան տեղին է հոս մէջբերելու Առակաց զրբի սա խօսքը՝ մարդուն հողին աշտանակն է Աստուծոյ լոյսին։ Գալբականքի Պատրիարք Աստուծոյ այդ լոյսն է որ կը շողացնէ Կ. Պոլսոյ հայութեան վրայ, փառաւորելով զայն և փառաւորուելով անոր մէջ։

ԿՐԹՆԵԿԱՆ

ՀՈԳԻՆ ՈՐՈՆՈՒՄԸ

«Հոգին է կենդանաբար,
մարմին ինչ ոչ օգնէ»
(ՅՈՒՀ. Զ. 46):

Աւետարանի այս պատգամը զմեզ կը դնէ երկու իրարու բաղխող ըմբռնումներու, աւելի ճիշդ զիրար վանող քաղաքակրթութիւններու և ապրումներու զիմաց, հոգեկանին և մարմնականին:

Պատմութիւնը ողբերգական պայքարն է նիւրիքն և հոգիքն, գաղափարին և եսին, և պատմութիւնը դուցէ բնաւ չկրնայ լուծել դաշն, իր ընկերային և իմաստասիրական հաշտեցման առաջարկներով: Ի՞նչ փոյթ սակայն որ պատմութիւնը յաճախ անողոք մնայ բարձրագոյն արժէքներու նկատմամբ, առանց հոգեկանին, նիւթական աշխարհը հազիւ թէ մարդկային է:

Մանօթ է ձեզի խօսքը արձանագրուած Ապոկոնի տաճարի ճակատին վրայ, «Ծանիր զքեզ»: Տէլիփեան այս պատգամը կը նշանակէր ճանչցի՛ր ինքզինքդ, ով մահկանացու, բայց ո՛չ զԱստուած: Յոյն իմաստունները զայն կը նկատէին հրաւեր մը իմաստասէրներուն, իրաւամբ մտածելով թէ մարդուն ներքին էութիւնը առաջին որբարանն է աստուածութեան, ու կը ջանային հետեւաբար արձանագրել իրենց հոգիներուն մէջ բռնկերը Տէլիփեան այս պատգամին:

Հոս է որ կը սկսի զիւտը կեանքին, և այս որոնումին մէջ է միայն որ մարդը կը հասկնայ ինքզինքը ու կը սովորի իր ճիշդ անունը, խորհուրդի մը մէջէն ժայթքող:

Մայր մը բնաւ չի կրնար մոռնալ այն վայրկեանը, երբ իր պղտիկը առաջին անգամ ըլլալով արտասանած է Մայր բառը: Մանկան այնքան ժպտաներէն վերջ, որոնց մէջ լուռ կերպով կը ծաղկէր արդէն մըտքին լոյսը, այս կոչը ժայթք մըն է հոգիի, լոյսին եկած ալիս: Ու մայրը կը շարունակէ հրճուիլ մանկան այս յայտնութեանը համար, վասնզի մանուկը ճանչցած է իր մայրը:

Նոյն է պարագան մարդուն համար, մենք չենք գիտեր թէ ո՞վ ենք մենք, ու ամէն օր մենք մեր մէջ կը գտնենք չպեղուած մարդեր, անծանօթ աշխարհներ, տիեզերք մը ամբողջ որ ի կարելիութեան է, զօրս պէտք է ճանչնալ: Մեր կեանքին խորհուրդը ծանօթ է մեզի, մեր յոյսերն ու երազները, մեր ցաւերն ու տկարութիւնները, մեր մեծութիւններն ու թշուառութիւնները, ծովը յուզող ալիքներուն մօտ կը շարժին մեր մէջ, առանց վերջնականօրէն պատուել կարենալու գանձք ծածկող խորհուրդը:

Ահա մեր սիրելի բարեկամը, որուն կը բարակենք, բռնած իր ձեռքը մերինին մէջ, իբրև գրաւական մեր բարեկամութեան: Մեր որոնածը սակայն այս ձեռն մէջ, մեր բարեկամին ձեռքը բռնել չէ՛, այլ ատով հաղորդուիլ իր հոգիին, որ գերագոյն խորհուրդն է իր անձին: Այս կերպը սակայն մեզի քիչ անգամ կրնայ մօտեցնել անհատներու ներքին մարդուն: Իսկ բազմութիւնները մարդոց, որոնց ո՛չ լեզուն և ոչ ապրումները մեզի ծանօթ են, մշտապէս կը մնան անծանօթ մեզի, ստեղծելով սիրոյ գերագոյն ողբերգութիւնը, եղբայր մարդէն եղբայր մարդերուն զլացուած:

Մարդկութիւնը կորստեան մէջ է, որովհետև քաղաքական, տնտեսական, ընկերային և կրթական հարցերը անորոշութեան և տգիտութեան մէջ կը մնան, և մեր մտքին առջև միշտ ներկայ է սա հարցումը, ի՞նչ է մարդը, ի՞նչ է իրական արժէքը մարդուն՝ որուն բաժնեկից ենք բոլորս: Անուշիկ այս մանուկը որուն անմեղ ժպիտը լոյս և անմեղութիւն կը ցանէ մեր հոգիներուն մէջ, կրնա՞նք դուշակել թէ ի՞նչ պիտի ըլլայ քանի մը տասնեակ տարիներ վերջ: Անշուշտ կը զգաս թէ ան միջոց մը չէ, այլ նպատակ մը և վախճան մը միանգամայն և թէ անսահման բան մը կը կապէ քու հոգիդ անոր:

Սակայն մեր բոլոր գործունէութիւնները մեծաւ մասամբ դարձած են մեքենական, և ինչ որ հոգիին է, անսահման ու անմահ, կը կորսուի առօրեայի տաղտուկին և գանազան զիւմակներ կրող մարդոց խմբաւորումներուն մէջ: Գտնել ինքզինքը, ճանչնալ իր հոգիին արժէքը, մեծագոյն իրողութիւնն է կեանքին:

Դիւրին չէ անտարակոյս բացատրել թէ ինչպէս կը հիանանք արուեստի գլուխ գործոցի մը վրայ, որ մեզ կ'առնին քնէ, և ուրուն մեր հոգիին մէջ ստեղծած ուրախութիւնը ուրիշ բան չէ, բայց գեղեցիկին գէմքը, որ կը նոյնանայ մեր հոգիի ներքին անճառելի սպասումին հետ:

Ինչ որ ալ ըլլայ արուեստի առարկան, պատկեր կամ երաժշտական յորինում, անիկա իր երանգներէն և գիծերէն անդին ունի իրողութիւն մը՝ որ չի պահանջիր ոչ մէկ ժամանակի և տեղի, որ կը ճառագայթէ բոլոր արուեստի գործերէն, ըլլան անոնք անցեալ կամ նոր, իրականութիւն մը չաւիտենական, խորհրդաւոր և անծանօթ, որուն կը մագնիսուի մարդուն հոգին քաղցրօրէն ու հիացումով: Ու ի՞նչ տեսարան որ արուեստի այս հաղորդականութիւնը դարեւոյժ մնացած է նոյն՝ բոլոր սերունդներուն համար, որովհետեւ ճշմարիտ արուեստագէտը ան է որ կրնայ գիտագրաւել անտեսանելի ներկայութիւնը գեղեցկութեան և արտայայտել դայն: Այս ներկայութիւնն է որ կը կազմէ միութիւնը բոլոր արուեստի գործերուն, ճառագայթեցնելով անոնց ներքին կեանքը: Մենք այլևս արուեստի գործի մը առջև չենք դգար ինքզինքնիս, այլ ներքին և զազանի խորհուրդի մը գիտաց, ուր մեր սիրտը կ'այլի անսահման իրականութեան մը հպումէն, և բան մը դէմ առ դէմ կուգայ մեր հոգիին, յսեմ ու գեղեցիկ, որուն գէմքը սակայն անծանօթ չէ մեզի:

Դիտութիւնը իր կարգին ունի նոյն ճամբան, հանդիպելու համար գերազոյն իրականութեան, որուն նիւթական պրպտումները կանգ չեն առներ անտարակոյս ամէն որ նոր փորձառութիւններ և գիւտեր արձանագրելէ, սակայն խորունկ ձգտումը որ կը կապէ Փիւթագորասն ու Այնշթայնը, նման են իրարու: Այս է այն իրողութիւնը, որուն հետապնդման մէջ են բոլոր խուզարկուները, և որ իր լուսաւոր յայտնութեան մէջ անոնց ազադակի կուտայ վերջնական ելլեման, որ գերազոյն և ստոյգ ճշմարտութիւնն է և կեանք մը՝ աւելի թանկ քան իրենցինքն:

Ահա այն գերազոյն սրբութիւնը որուն կը զոհեն ինքզինքնին արուեստագէտներն ու գիտունները բոլոր ժամանակներու: Ահա

ճշմարտութիւնը որուն մէջ կը նոյնանան բոլոր սուրբերն ու հերոսները, որոնելու զԱստուած իր գործին մէջ:

Ամէն էակ, նման գիտունին և արուեստագէտին, կրնայ որոնել իր հոգիին գէմքը, և վայելիլ անոր յաւերժական ներկայութիւնը ինքզինքնին մէջ: Շատեր կրնան կարծել թէ իրենք անհաւատներ են կամ զուրկ հաւատալու կարողութենէն. այդպիսիները կը նմանին Աւետարանի մէջ յիշատակուած Սամարուհիին որ կ'անգրտանար իր հոգիին ծարաւ և դայն լեցնող գերազոյն կարելիութիւնը, կարծելով թէ գերազոյն աստուածութիւնը կը գտնուի Գարիգին լերան սրբարանին մէջ, առանց մտածելու թէ ան կը գտնուէր նախ իր հոգիին մէջ:

Արուեստագէտը իբրեւ աշակերտ Գեղեցկութեան, գիտէ թէ ինք ի վիճակի չէ իրազործելու արուեստը իր ամբողջութեան մէջ: Իր բոլոր գիւտերուն և իրազործումներուն մէջ ինքը սկսող մըն է լուի Անշուշափելի վարագոյր մը կ'արգիլէ զինքը տեսնելու այն գէմքը՝ որ կ'առնինքնէ իր բովանդակ էութիւնը, սակայն միւս կողմէն իր կեանքը կը հոսի այդ հետապնդումին մէջ, ամէն օր աւելի աճուն թոխքով մը, որուն ուրուագրումը կը փորձեն անընդհատ իր ձեռքերը:

Ոչ ոք կրնայ ըսել թէ ինչ է ան, և կամ թէ ինչ չէ ան, որ լուսաւոր սիւնի մը պէս կը յայտնուի մեր մէջ յաճախ: Բոլոր անոնք որ կ'ապրին զԱստուած, չեն կրնար ըսել ու յայտնել զԱյն ամբողջապէս, Անիկա կը մնայ խորհուրդ մը՝ որ իր լուսաւոր գիծերը կը զրոյմէ մեր հոգիին վրայ: Եթէ զինք կը կոչենք բարի, արդար և ողորմած, այդ յատկութիւնները նախ մերն են Իրեն ըլլալէ առաջ. մեր բառերը հազիւ թէ ի վիճակի են զինքը որակելու, որ վեր է ամէն բանէ և անորակելի է ըստ ինքեան: Անոր հետ խօսելու լեզուն լուսութիւնն է և լուսութեան մէջ միայն Ան կրնայ յայտնուիլ հոգիներուն:

Մ. Վ.

ՄՈԳԵՐՈՒՆ ԳԱԼՈՒՍՏԸ

ԵՒ

ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ

«Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեմէմ Հրէասանի յաւուս Հեռովի արայի, ահա մոգք յարեւելից եկին յերուսաղէմ: Եւ ասեն՝ ա՛ւր է որ ծնաւ արայն Հրէից. զի տեսաք զաստիճանս յարեւելս, եւ եկաք երկիւրպազանել նմա»:

(ՄԱՏԹ. Բ. 1-2)

Ս. Մենդեան տօնին առթիւ, քննենք յաւիտենական Մանկացեալ մանուկին ուխտի եկող մոգերուն շարժառիթն ու երկրպագութիւնը, խորասուզուելու համար անոր խորհուրդին մէջ:

Ս. Մատթէոս աւետարանիչ կը պատմէ լուսաւոր աստղին երևումը, մոգերուն գալուստը և երկրպագութիւնը, և Բեթղեմէմի մանկանց կոտորածը:

Մատթէոս առաքեալի համաձայն, Յիսուս ծնաւ «յաւուս Հերովդի արքայի»: Աւետարանին այս բացատրութիւնը կամ ժամանակագրութեան պարագան ինքնին շատ անորոշ արտայայտութիւն մըն է. վասնզի Մեծն Հերովդէս, Յիսուսի ծնունդէն 40 տարի առաջ արդէն թագաւոր էր Հրէաստանի վրայ: Մեծն Հերովդէս, Հռովմէն նշանակուած մանկաւիկ արքան, հրեայ ըլլալով հանդերձ, Հռովմի ենթակայ միացադաքականապէս և Յիսուսի ծնունդէն տարի մը վերջը մեռաւ, անփառունակ, կասկածամիտ եւ երկչոտ թագաւորի մը համբաւը ձգելով իր ետին:

«Յարեւելից», արեւելքէն եկան կ'ըսէ Ս. Մատթէոսի աւետարանը, մոգերու գալըստեան առթիւ: Թէ և անոնց թիւը աւետարանին մէջ յիշատակուած չենք գտներ, սակայն և այնպէս, աւանդութեան համաձայն, մոգերը երեք էին: Արեւելքը, խորհրդաւոր և միսթիք այս երկիրը, ծնունդ տուած է մեծամեծ և հզօրագոյն թագաւորութեանց և օրրանը եղած է հնամենի քաղաքակրթութեանց:

Մոգերը թագաւորներ չէին, բայց, Մաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի էջ, թագաւորապատիւ էին, հեղինակաւոր և պատկառազգու մարդեր՝ որոնք թագաներու առաջնորդ կը հանդիսանային:

Եթէ թագաւորները ժողովուրդներու վրայ կ'իշխէին, մոգերը իրենց հեղինակութեամբը անոնց վրայ ոչ միայն ազդեցութիւն այլ հմայք և պատկառանք կ'ազդէին:

Մոգերը տեղեակ էին ինչ ինչ գիտութեանց: Անոնք՝ ոչ միայն գիտութեան և ուսման մարդիկ էին, այլ ունէին իրենց կրօնական գիտելիքները և գաղտնագիտական ուսումները:

Անոնք՝ օր մը, երկնակամարին վրայ, նորանշան աստղ մը տեսան, այս նոր և զարմանալի աստղին լոյսը Արուսեակի լոյսին չէր նմաներ, ոչ ալ Հրատ մոլորակին բոսորափայլ և ատրաշէկ բոցը ունէր: Մոգերուն տեսած այս նորանշան աստղը զարմանալի էր արդարեւ, ան չունէր բոյլքի և եօթնեղբայրի և առաւօտեան հովիւի աստղին պայծառութիւնը և սակայն զարմանալի և զարմանահրաշ երևոյթներ կը տեսնուէին անոր վրայ:

Երեք մոգերը նոր լոյս, նոր ոյժ և ունդ ստացած ճամբայ ելան արեւելքի խորերէն դէպի Հրէաստան, գտնելու համար նոր թագաւորը, նոր Մեսիան և նոր Իշխանը, որու մասին մարգարէները գուշակած էին: Անոնց մտքին առջև բացուեցաւ Ս. Գրքին խորհուրդը «ձագեացէ աստղն Յակոբայ և յարիցէ այր յիսրայէլէ», և անոնք իրենց ներաշխարհէն խորհրդաւոր ձայն մը լսեցին որ կ'ըսէր իրենց «Հրէից թագաւորը, մարգարէներուն գուշակած Մեսիան ծնաւ, և այդ աստղը, զոր դուք կը տեսնէք երկնակամարին վրայ, փայլուն և հրաշագան երևոյթով Անոր աստղն է, Անոր գացէք ու ձեր ընծաները տուէք»:

Մոգերը ուրախ էին, քանի որ Մեսիան աշխարհ եկած էր և իրենք պիտի գտնէին զԱյն լուսաւոր աստղին առաջնորդութեամբ: Բազում պատմուածքներ և ժողովրդային աւանդաւիպեր հիւսուած են երեք մոգերու շուրջ: Է. դարուն ապրող անգլիացի վերապատուելի Պէտրին համաձայն, երեք մոգերուն անուններն էին Մելքոն, Գասպար և Պաղտասար: Մելքոն ծերունի մըն էր ճերմակամօրուս, Գասպար երիտասարդ կարմրագոյն մօրթով չիկամօրուս, իսկ Պաղտասար թխագոյն անձ մը: Ինչ որ Սուրբ Գրքէն զիտենք անոնց մասին այս է միայն, «անոնք արեւելքէն եկած մոգեր էին»:

Պատմութենէն գիտենք թէ, այդ մասնակ ընդհանուր անկեղծութիւն մը կար, զալէք աղատարարի մը, փրկչի մը մասին, որ մարդկութիւնը իր ենթարկուած թշուառութենէն և տառապանքէն պիտի փրկէր: Հրեաները Մեսիայի մը կը սպասէին որ Դաւիթի անկեղծ թագաւորութիւնը պիտի վերականգնէր Ս. Երուսաղէմի մէջ:

Մոգերը գիտուն մարդիկ և աստղագուշակներ էին, անոնք աստղերուն շարժումները քննելով գուշակութիւններ կ'ընէին մարդոց ապագայի մասին:

Քէրէր գերմանացի աստղագետին համաձայն, Հռոմի 748-749 թուականներուն (իմա՝ Յիսուսի ծննդեան ժամանակ), Լուսնի մակ, Երեւակ և Հրատ մոլորակները իրարու հանդիպեցան Զուլ համաստեղութեան տակ, երկնային լուսաւոր մեծ երեւոյթ մը, աստղ մը յառաջ բերելով, ինչ որ լուսաւոր աստղին երեւումը կրնանք նկատել: Երբ մոգերը Ս. Քաղաք հասան, անձկութեամբ ըսին «Եւր է որ ծնաւ արքայն Հրէից: զի տեսաք զաստղն նորա յարեւելս, և եկաք երկրպագանել նմա»:

Հերովդէս արքան երբ լսեց մոգերուն գալստեան գրգապատճառը, խռովեցաւ և զանոնք կանչեց և անոնցմէ ստուգեց աստղին երեւման պատմութիւնը: Նենգամիտ այս արքան, որ 40 տարիներ թագաւորեց Հրէաստանի վրայ, երբ լսեց թէ Մեսիան Բեթղեհէմ քաղաքին մէջ պիտի ծնի, առիկա չարագուշակ նշան մը նկատեց իրեն համար, վասնզի Անով վերջ մը պիտի գտնէր իր անփառունակ թագաւորութիւնը: Մոգերը անպատու ուրախութեամբ Բեթղեհէմ գացին լուսաւոր աստղին առաջնորդութեամբ և իրենց նուէրները, ոսկի, կնդրակ և զմուռս մատուցին Անոր: Մոգերը խոնարհեցան Անոր առջև: Անասունները որ բնութիւնը կը ներկայացնէին առաջին երկրպագուները եղան Անոր, հովիւները որ ժողովրդին ներկայացուցիչներն էին, երկրորդ երկրպագուները եղան, մոգերը երրորդ իշխանութիւնը — Դիւանութիւնը — կը ծնրադրէր Բեթղեհէմի Ս. Այլի մէջ ծնող Մանուկ-Արքային, Աստուծոյ Միածին Որդւոյն, որուն թագաւորութիւնը և իշխանութիւնը վերջ և սահման պիտի չունենար... Տիեզերքին Տէրը լոյս էր և իր Որդին որ լոյսը կը մարմնացնէր

աշխարհն էր զրկեր, լուսաւորելու և բարձրացնելու մարդկութիւնը: Ստեղծագործութեան մէջ, Աստուծոյ առաջին հրաշքն է լոյսը, այն լոյսը ուրկէ կը ճառագայթէ աստուածային իմաստութիւնը: Մարդիկ, միշտ փնտած են լոյսը, այն լոյսը որ երկինքը երկրիս կը միացնէ և միշտ խորհրդանշանը եղած է կրօններու, իմաստութեան և հայեցողական գիտութեանց: Արարչագործութեան մէջ լոյսով կը գոյանան և կը կազմուին բոլոր ստեղծագործութիւնները:

Իշխան մոգերուն երկրպագութենէն ի վեր, մօտ քսան դարեր անցած են, սակայն Անոր թագաւորութիւնը օրէ օր կ'աճի և կը զօրանայ: Մոգերուն հետ մենք ալ երկրպագենք և փառաւորենք փառաց Տէրը, որ ծնաւ Բեթղեհէմի մէջ ի լրումն ժամանակաց: Մենք ևս, անոյ խուսկեր ծխենք Անոր սուրբ սեղանին առջև, վասնզի Ան է մեր հօգններու Փրկիչը և մարդոց վերջին աղատարարը և յաւիտենական Քահանայապետը: Սրտեանդ աղօթք մատուցանենք Մանկացեալ Փրկչին, խաղաղութեան և սիրոյ Մեծ Իշխանին, որպէսզի խաղաղութեան մէջ պահէ բովանդակ աշխարհի ժողովուրդները և ազգերը, անոնց մէջ ցուացնելով իմաստութեան, արդարութեան, ազատութեան, հաւասարութեան և եղբայրսիրութեան աստուածային շողերը... Օրհնենք իր Ս. Ծնունդը և ցնծազինս երգենք «Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի, որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ»:

ՊԱՐԳԵՒՆՆԻ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՄԵՆԱՆ



ԱՆՑՈՐԴՆ ԱՅՍ ՎԵՐՋԻՆ

Ուրեմն դո՞ւն ալ անցնիս պիտի հոգւոյս երկինքէն,
Ամպագընաց ու անդարձ, ինչպէս անցան ամէնքն ալ,
Ոմանք արագ եւ ոմանք ուղեւոր՝ քիչ մ'յամենալ
Մեծ պատրանքին, խռովին, հորիզոնի համբոյրին:

Օ՛հ, դուն վերջինն ես գուցէ, ներքնածին ձայն մ'ինձ կ'ըսէ
Եղի՛ր իմ աստղս պայծառ, անասող համբան է դժուար.
Հարցուր ամէն համբորդի, անապատի եւ ծովի,
Անդոհական, անվախճան, վճանգներով եմ յղի:

Եղի՛ր իմ աստղս բարի, աղջ մ'է ուղին ալ կեանքի.
— Քեզ չե՞նք ըսած հէ՛ք հոգի, մարդը աստղով կը ծնի...
Ինչ փոյթ քէ որքան փայլի, — կրկներեւոյթ համբորդի:

Եղի՛ր դուն աստղս բարի, իմ գիշերներս լուսելու,
Բայց աստղը հէ՛ք իմ հոգի, երկինքն ի վար կը գայթի,
Ուրեմն ինկի՛ր, եղիելի գոյութիւնն այս կոտրելու...:

ԶԱՒԷՆ Ա. Զ.

ՅՈՒՂԱՐԿ

Գացէ՛ք իմ երգեր, զի ալ վերջ գրքան մեր խաղերն անոյ՛ւ,
Գացէ՛ք մանուկներ, բոշող խնդութեան ու վիշտի դանդաղ,
Չեզմէ մաս մը ես երգեցի արդէն, երէկ էր այդ դեռ,
Բայց կան չերգուածներ՝ որոնք իմ վաղուան տաղերս պիտի՛ ըլլան:

Գացէ՛ք իմ երգեր, քէ իսկ քաղաքացի ըլլայ ձեր համբան,
Նոր վիշտեր կ'առնենք մեզմէ ինչ որ հին բերկրանքը կուտայ,
Քաղցր է ինչ որ մեզ կը վերադառնայ անցեալէն միայն
Անու՛ւ՝ նոյնիսկ երբ տառապանքներով ան գնուած ըլլայ:

Գացէ՛ք իմ երգեր, ու մի դառնա՛ք ես համբէն ձեր հետու,
Թէ մարդիկ հարցնեն ձեր վիշտի մասին եւ ուրախութեան,
Պատեցէ՛ք անոնց ցար ներկային զոր ձեր սիրտ նանչցաւ,
Ըսէ՛ք մանաւանդ բերկրանքը ըսոյ՛ք ձեր տեսած վաղուան:

Թրգմ. Ե.

FRANCIS THOMPSON

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Անխոցելի դառնաս մինչեւ
 Պիսի խոցուիս հազար անգամ,
 Կ'ըլլայ յետոյ խօսքդ պատգամ,
 Կը շողայ փառքդ ինչպէս արեւ :

Հէ՛ք եղբայր, բախտիդ մերք կը մըսածեմ,
 Մեղաւոր մարդեր քեզ պիտի խաչեն,
 Թաղեն քեզի նեւ իրենց սխն ու քէն,
 Պաշտեն իբրեւ սուրբ երբ ու՛ է արդէն :

*
* * *

Ի՛նչ մընաց ինծ'
 Ոչինչ,
 Ոչ յոյզ, ոչ յոյս, ոչ կարօս,
 Ոչ համ, ոչ հոս.
 Ուրեմն երբամ մօրքս մօս,
 Դըսնեմ քերեւս հին օրերն,
 Ե՛ւ երազ ե՛ւ սէր...

- Հապա եթէ մութ գիշերն
 Տարածուի անվերջ,
- Կը բընանամ ես անդորր,
 Ոչինչ չեմ յիշեր,
 Կը դառնայ ցամաք անգոր :

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՄԵԾ - ՄԱՅՐԵՐՈՒՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գարնանային ճառագայթներն ու երեք,
Աղբիւրներու ջինջ ոգին,
Վարդերու շունչն եւ հողերու մրմունջներն,
Արիւնն ինչ որ թանկագին

Ունէր քաղած սերունդներու լոյս ակէն՝
Բերիք ինծի իբր ընծայ,
Ո՛վ Մեծ - մայրերս, ջրիք ե՛ւ սիրսս հրեղէն՝
Որ վարդի պէս կը ցոլայ:

Ձեր աչերէն հոսող արցունքն եւ անուրջ,
Վերացումներն հաւասփն,
Ձեր պայքարի մեծ ոյժն ու կեանքն անսրսունջ,
Պատմութիւններն ազգային,

Տառապելու եւ տառապանքն երգելու
Քաղցրաւունջ հեծփն ու բարբառ՝
Ես՝ մեղուի պէս՝ ձեր արիւնէն կենսասու
Հաւաքեցի զերթ նեկսար...

Ո՛վ մեծ - մայրիկս, Արգէտի թուփերուն
Թառած քնոյւ աղանի,
Դուն որ գիտցար Շահէնին հետ շինել բոյն
Ժայռերու վրայ այգալի,

Դուցէ քեզմէ՝ ժառանգեցի սլանալ վեր
Դէպի կասարն երազին,
Ըզգալ հոգիս ամպրոպներուն հետ ընկեր
Եւ աստիւերու ծաւալին...:

Ուրիշ մեծ - մայր մը քողելով Կեսարիան,
Ծիծեռնակին պէս գաղթող,
Սեւ Ծովի լուրք ամփունքն ընտրեց իբր կայան,
Յուրթի Պոնտոսն այգաւող...

Իր զաւակներն՝ որոնք եղան մեծ հայրս ու
Ձորս եղբայրները անոր՝
Դիտցան ըլլալ քիչ մը հպարտ ալ ազգու
Օրէնքագէտ լուսաւոր:

Վայելչասէր, խելացի կինն այդ չքնաղ
Ունէր անհուն պատշաճումն
Պարտէզներու, ծառ ու ծաղկի եւ խաղաղ
Աղբիւրներու լուսակումն:

Գուցէ մեծ հայրս՝ զոր տեսած եմ շարունակ
 Վարդերու դէմ հիացիկ՝
 Այդ պատեկի մօր սրտին մէջ անապակ՝
 Ճանչցաւ պարտէզն ու ծաղիկ...:

Ո՛վ հօրս հանին, իմ հոգիիս մէջ սակայն
 Բնութեան սէրն անյագուրդ՝
 Գարձաւ հացի՛ն եւ ջուրին չափ կենսական,
 Իմ էութեան կենսահիւք...:

Ահա՛ ուրիշ մեծ մայր մը սեւ աչքերով,
 Սեւ մազերով զերթ գիշեր,
 Որմէ պահած եմ պատկերն այս հոգեխոտի՝
 Իբրեւ վերջուց կարեվէր...:

Բու մ'էր ինկած ծխնետոյզէն վար՝ մեր տան,
 Հանիս կանգնած մեր սեմին՝
 Կը զարնէր ձեռքն իր ծունկերուն, ողբաձայն
 Կը գուշակէր անձկագին՝

Թէ անաւո՛ր չարիք մը կար մեր տան վրայ...
 — Նախազգացում անբնիկ —
 Իր մէկ որդին՝ ինչոր ասպետ խաբեբայ՝
 Եղաւ արասն իր տունին...:

Իսկ մայրն իմ մօր՝ գերբզգայուն ու վրսեմ՝
 Ինձ է տրած իր անունն.
 Բայց կը զգամ թէ հոգւոյս մէջ ալ կը կըրեմ
 Իր բովանդակ էութիւնն:

Իր փերողի հոգին իմ մէջ է ծաղկած
 Ու խորացած հետզհետէ.
 Իր շեշտերն են որ կը կրկնեմ սիրարբած՝
 Իմ երգերուս մէջ գուցէ...:

Ալեհեր կին մ'ըսաւ թէ հի՛ն օրերուն՝
 Հանիս տեսած էր մէկ հեղ...
 Հսկայ օձ մը յաւեցուցած սողոսկուն
 Ու զայն դիտած՝ դաւնագեղ

Եւ ըզզլիս խաղերուն մէջ իր ձայնին...
 Ու կ'երագե՛մ ես հիմա
 Քեզի՛ նման, ո՛վ մեծ մայրդ իմ վիպային
 Երգով մը խո՛ր, հոգեհմայ՝

Գիւրթէ՛լ չարին ասակ սիրտն ու արգիլե՛լ
 Թոյնին ժայթքը մահածին,
 Հոգիս հազա՛ր դաւնակներով ընծայել
 Բարօրութեան մարդկային...:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ

ԳՐԱԿԱՆ

ՍԿՐՏԻԶ ՊԷՇԵԿԱՇԼԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Ու երբ գրեց, անոր գրիչը սուգի մէջ թաթխուած դուրս կուգար: Ի՞նչ հրաշք որ այդ բնասնունդ թաթխութիւնը չըլլայ տըժ-գունած, ալլասերած, նոյնիսկ տուժած ոչ միայն հայկական չափէն բայց մանաւանդ պարսաբէն երբ նկատի ունենանք ողբալի վրիպանքը Տէր-Զին, Բն-Զին (Ալիշան), Բաբ-Զին (Հիւրմուղ), Լը-Զիններուն (Խրիմեան) որոնք գուցէ այսօր չկարգաց-ուելու իրենց մեղքը կը մնան պարտական այդ բնասարաս թաթխութեան: Հզօր պատ-կերակերտութիւնը Սիամանթոյին կը կրէ իր պատիժը գուցէ նոյն մտադրութենէն: Յետոյ, մասնաւոր պարագայ մը. — ուշա-գրաւ է որ այդ թաթխութիւնը, ինչպէս վերը ակնարկեցի, ըլլայ բաղկացուցիչ մէկ մասը իր ընդհին, որոչ չափով միշտ ներ-կայ՝ նոյնիսկ անոր ամենէն ձախող տղայա-բանութեանց մէջն ալ: Խառնուածքի փաստ: Բայց նոյն ատեն ցեղային կնիքի փաստ մը: Կը գտնուի սա տրտմութիւնը ուրիշ արեւ-մտահայ գրականութեան լալկան, գրքու-նակ հեշտանքներէն (Սէթեան, Որբերեան), գրական մարմաջին (եղիայի քառորդ դար տեղող սգահար փառասիրութիւնը, իր ջլախ-տը սկեզօծելու): Կը գնեմ որոշ տարբե-րութիւն մը մեր միւս իրաւ բանաստեղծ-ներով մեզի ընտանի այն տրտմութիւննե-րուն ալ ընդմէջ որոնք կը յառնեն մեր ներքը երբ կը կարգանք Պետրոս Դուրեա-նը, Վահան Թէքեանը, Մատթէոս Զարիֆ-եանը, Վահան Տէրեանը, Միսաք Մեծա-րենցը: Դարձեալ Գ. Պէշկէօթլիբեան, Գ. Շահինեան, Կ. Ոսկեան, տրտոււ բանաս-տեղծներ, համեմատելի չեն մեծաշունչ, սգաւոր, դաշնաթաւալ մեղամաղձութեան մէջ Պէշկէօթլիբեանով նկարագրի մը դար-ձած սա զգացական բարեխառնութեան: Հէքեաթ յորինել չի նշանակեր ուրեմն, մեր բանաստեղծներու ծանր, «նստած», յա-

ւական բառով մը՝ բիրեղացած վիճակ-ները յայտարարել բխումներ որոնք մար-դու մը ներքին ծորումները թելադրելուն չափովը, խուճիկի մը, ժողովուրդի մը արե-նան գրութիւնները կը թելադրեն: Պատա-հական չէ որ մեր իրաւ, իրաւի մօտ բոլոր քնարերգականները, թերեւս առանց գիտակցե-լու, եղած են տրտմութեան լարի մը զոր-ձաւորները: Մի ըսէք թէ կուշտ ենք ահ ու վախէն, լացուկոծէն: Ուզէք չուզէք այս հոգեվիճակը ձեր ժողովուրդին հարազատ է, ինչպէս՝ իր լաւատեսութիւնը, ինքզին-քը սփոփելու խմաստութիւնը, ապրելու արարքին մէջ իր պարզած ապագած յա-մառութիւնը: Այս տողերուն հետ չեմ փոք-րեր տարողութիւնն ալ վտանգին որ չըջուած ռոմանթիզմ կը նշանակէ հոս: Միշտ դէպի այդ վտանգը հրուած, օրուան կարիքնե-րուն ու չարիքին, առնուազն գերութեան նուաստացնող պատկերին ներքը, Մկրտիչ Պէշկէօթլիբեան բախտն է վաշելած զգա-տութեան մը, ժուժկալութեան մը որոնք ազատած են իր թաթխութիւնը գրական հոգեւորութեան, գեղութեան փորձող ցուցա-մոլութեան (որով մեր արցունքին կաթիլ-ները կը վերածենք հեղեղի, մեր ցաւը կը տարածենք դէպի ամբաւութեան խորքերը), զգացումութեան, աման լալկանութեան, հինցած բառով մը՝ Պայրընիզմէ, — որա-կումներ ասոնք այնքան մօտիկ Պէշկէօթալ-լեանով սեւեռուած վիճակներ յատկանշող, բայց միշտ պակասաւոր: Անշուշտ մենք դժուար պիտի հաշտուինք մտափիճակի մը որ մեզ կը նեղէ, երբ՝ մեր ցաւը, կարօ-տանքը, անսփոփ կորանքը ազդկան մը ե-րեսին ըսելու փոխարէն, չիտկէ չիտակ, կ'ընտրենք քիչ կամ հազիւ մարդկային ե-ղանակը . . . մեռնելու, յետոյ ձգելու «հո-ղապաշտան մեր կայանը» (Յէթի-Զաւալ) ու գալ գտնելու այն ազջիկը որ զիւրազուարճ գգուանցներու է անձնատուր ուրիշի մը հետ, անոր ըսելու համար տղայական բայց տար-օրէն քաղցր ալ . . . ապրումներ, ու իր սիրոյն անբաւարար փոխարէն անոր սերը պահանջել: Մկրտիչ Պէշկէօթալլեանի այն քերթուածները (Նեթ-Ին Կոյա, Յէթի-Զա-ւալ, Մեթ-Ի Մեթ Գըն-Զ, Գըն-Է Շէթ-Է, Մեթ-Ի Մեթ-Է Նեթ-Էթ-Է, յիշելու համար քանի մը հատ) որոնք խորքը մահն է տուած ու ձեւը՝ քերթողին տաղանդը, թերեւ իրենց

նմանը չունենալու սահմանում գեղեցկութիւններ չեն իմ նկատածանս մէջ, այլ՝ այս ժողովուրդին ամենէն լուրջ, իրաւասեղծութեան խորը բարասող մնալուն վերքէ մը պատկերներ, կերպարանքներ:

Հեծե՛ճէ՛, սօսափին պէս գիշերային պալ
հողմերուն,

Տուր իմ ձայնին ծաւալանալ, գոժկան
ներուն ջայլին հանգոյն:

Եկուր իմ գիրկն ու մոմնջեն վերջին
մոմունջդ, Բեզ չփեռա՛ճ:

Բեկորներդ դեռ չնեճած կոխան ոսփին
անցորդներուն:

Արշալոյսը ծիծղուն կեանքին խորատոյգ
է մուր մեղին մէջ,

Իմ ապագան քաղուած ներքեւ բուխ ամ
պերու փայլակնացոյս,

Ու իմ ներկան, կը բռնանի որ դմբիկով
ու փուշերով,

Ո՛վ իմ բրնար, սիբս ե խոնջած բռնե-
րուն ճակն իմ յուշերուն:

Մինչ նախընծայ ֆու լաբերուդ կը կայ-
սուէին զուարն մասներս,

Խայտանքիւր բռնցոց խումբեր ընկեր եւ-
զի զիս ունէին,

Ու իմ մուսան կը լողանար նախահու-
սան աղբիւրներու,

Անկէ ինձի մեղր, ծաղկահոտ անուշու-
րիւն մատուցանող:

Յի մը միայն երջանկութիւն այդ փայե-
ցաւ առանց ամպի:

Յոր երկրորդ ալ չունեցաւ գեղեցկութիւն
այդ սեսիլին:

Ամեն օրուան ձոցէն ձնած խաւար ու
բարկ փորքիկներ

Կը կապէին իմ ծաղիկներ կը սուրային
անհետ փայտուս:

Արդ իմ առջին արձանացա՛ճ՝ բռնառու-
րիւնը սոսկադեմ,

Ուղեւորն հե՛ք երբ կը սեսնէ յուղկահար
արիւնըսուտէ,

Կ'ընէ մեկդի բռն իր ունպէս, չարդի-
լելու սայրը բուրին,

Ես կը նետեմ քնարս իմ բաց, դեմին
խոժոռ ակոյեանին:

Հեծե՛ճէ՛, սօսափին պէս գիշերային պալ
հողմերուն,

Տուր իմ ձայնին ծաւալանալ, հանգոյն
ջայլին գոժկաններուն:

Եկուր իմ գիրկն ու մոմնջէ մոմունջդ յե-
սին, Բեզ չը փեռա՛ճ,

Բեկորներդ դեռ չնեճած կոխան ոսփին
անցորդներուն:

Ձի հանգոյն լուսնի շողին օրուն կ'ըղձայ
սղան փարիլ,

Մրանետէ բարիք կեանքին՝ քափքփե-
ցաւ իմ ձեռքերէն:

Շիջաւ հուրքը բոցանշող խանդն ու առ-
խոյժն իմ հրահրող,

Սեւ գիշերը հասաւ ծածկեց հոն ուր ներ-
մակ իմ նանապահը կ'երկարի:

Պիտի փախ՛մ ես մեծաւոր իմ նանապահն
ամայութեան,

Չը դարձրեմ պիտի այլեւս բիբս անա-
ցունք՝ իմ Աղենին:

Ինչ հարկ երգի ու նրազի ախորհալին
համար անգարձ,

Փերուկ՝ Քրնա՛ր, ես լուռ ցաւեր, կ'ու-
զեմ ես լո՛ւռ գեղեզման:

(ՄԼԵՐՆ Ի ՄԵՍԻ ՍԳԻՐԵՐԳԼԱՅ)

(ՏԱՂԵ ԵՒ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆԸ)

Քերթուածը գիրք է ինկած մահէն կալա-
նաւոր մատուցներով: Բայց ասիկա հոս
կարգալը, մտամոլոր ու անտարբեր, չուքն
խոկ չի գնեւ մահի՛նն որուն շուրջը ազգին
գերագոյն դէմքերը կուգային ու կ'երթային
... Ե՛րբ գտած է ասին ձեռք երկարելու
թուղթին: Ահա, ըստ կենսագիրներու վկա-
յութեան, մատառով թղթեակի մը վրայ
«խաղաղուած» վերջին տողերը այն երի-
տասարդին որ վառեցաւ, աւելի քան քսան
տարի, իր ժողովուրդին համար, մեծած
օրուան առաւուն իսկ գտնուած, սնարին

«Երեւեցաւ նա ինձ, ո՛վ Աստուած իմ
... արդեօք կի՞ն մ'էր նա թէ երեւոյթ
սքանչելի: Քնքուշ էր նորա հայեացքը,
նման նայուածոց լուսնակին, բիր ցայգա-
կան թերաքացիկ գիշերոյս վրայ:

«Կը քայլէր նա, ու թռչնիկ մը թռե-
ցաւ ինձ որ կ'ոտտոտէր տերեւէ տերեւ:

«Անոյշ էր նորա ձայնն ինչպէս ծայրա-
մը նորափթիթ կուտի որ հիացիկ կը զմայլի
իւր երկնատուր գեղոյն գիմաց:

«Եթէ ուրազ մը իւր ձայնէն կը զլորի
օդոց մէջ, ամբառութիւնը կը խալտայ եւ
բանութեամբ: Այնպէս չէ՞, Աստուած ք իմ,
և քու զուարթութեանք յերկիր կը խոնարհին
իրենք ևս ունկնդիր ըլլալու: Եթէ լուսա-

ներթ թեւի մը վրայ, անհուն իրրեւ քու
ամբուսութիւնդ, յետուս բոլոր յոյսերդ և
ամենագոր ձեռամբդ ցունց տաս այդ հրա-
շարուեստ չղթային, չեմ զիտեր թէ իր ան-
կենդան ձայնն կրնա՞յ այնքան գեղեցիկ
ըլլալ որքան նորա հոգւոյն արձակած մըր-
մունջըն:

Մահը չեն վերլուծեր: Ով ալ ըլլայ ե-
րեւցողը, զիտցէք թէ մեռնողին ամենէն
ազնուական ջանքն է անիկա, Մեծարեն-
ցին բառովը, երբ մեր մարմինը ինքզինքը
կ'ողեղինէ, իր խորագոյն դրութեան կեր-
պարանքը հագնելով: Մկրտիչ Պէշիկթաշ-
լեանի տրամաթիւնը: Ըսի՞նք է ուսմանթիւմ
մը չէր անիկա: Անիկա իր ժողովուրդին
անունն է, Դուրեանին բառով՝ սեւ կարը,
տոնուազն հարիւր սերունդի վրայ: Զայն
ծծեցին մեր ժողովուրդին ոչ միայն մար-
դոց չղթները, այլ, չափազանցութիւն պիտի
չըլլար բռն՝ քարերը անոր շէնքերուն, հո-
ղերը անոր արտերուն: Ու ի՞նչ զարմանք,
եթէ գտնէք այդ թախիժին չողքը մեր մա-
նուկներու անուշիկ, սրտառու աշուկնե-
րուն խորը, թարմութեանը մէջ մեր պար-
մաններուն, ու ամպարագիծ նուիրմանը
մէջ մեր հարսներուն ու մայրերուն: Ու
գտնէք զայն մեր ժողովրդական որքան
սրբազան երաժշտութեան մէջ որպէսզի
անիկա չհազնի սա արքայական վայելու-
թիւնը, մեծաշունչ պատկառանքը Մ. Պէ-
շիկթաշլեանի մահաշունչ տաղերէն ներս:
Տրամաթիւնը ուզուած, ճարուած, զիտ-
ուած խաղ մը չէ մեր արուեստին ու ար-
ուեստագէտին վրայ, այլ հոգեղէն մոյնք
մը: Կարգացէք, որ քերթուածը որ կ'ու-
ղէք, մեր իրաւ բանաստեղծներէն, հոն է
անիկա, անոնց հոգին ըսելս կուգայ, բա-
ռերուն, պատկերներուն, կշռոյթին խզ
համեմուտ հիւսքովը: Ու մի տանիք զլուսի,
ձեր զուարթութիւնը պահանջելու փղշտա-
ցիութիւնը աս ու ան քաղաքական, ման-
կավարժական տեսութիւններուն տուած
ձեր կոնակը: Ընդունեցէք ձեր արեան կեր-
պարանքները, այնպէս ինչպէս դարերը չի-
ներ են զանոնք: Ազգային երբող, գործիչ,
ուսուցիչ, քաշեալգիր որակականները կը
վայլեն անշուշտ սա դերձակին տղուն, քառ-
սուն անոր տարիները գունաւորող, պիտա-
կող: Բայց եղբերգակ բանաստեղծի իր

արդար տիտղոսը ոչ ոք մեր մէջ արժեցու-
ցած է անոր հաւասար հարապատութեամբ
մը: Մեր տրամաթիւնները — այն երանգը
հոգեբուն, յոյզերուն որով կ'անձնանան
Վահան Թէքէեանի նոյնախորք տաղերը —
աւելի կամ նուազ ծանր ապրումներու
յայտարար, անբաւական են մեզ արժանի
ընելու սա վերագրումին: Կեանքին լրիւ
կնիքը անհրաժեշտ է որպէսզի մեր աւրա-
մութիւնը գառնայ մեր ներքին, անվերա-
ծելի բարեխառնութիւնը: Ու բաւական բան
գիտէք զուք երկատարողէն որ կախարդա-
կան սրտոններու մէջ ծծեց իր գիտակից
քոսն տարիներուն թոյնն ու նեկտարը,
առտուածային ընկալչութեամբ մը, կա-
խարդական օրերու ամբողջ հուրքին բա-
ցաւ իր ոչ միայն միտքը, այլև երակները,
տուաւ իր ներքին սրբութեան շաղն ու
շարպարը ծարաւահիւժ գանգուածներուն,
եղաւ հիւզին ու պալատին ներսը, պահե-
լով անոնց համար նոյն սրտագին ընտա-
նութիւնը, մտաւ տղոց, պարմաններուն,
երկատարողներուն ոչ միայն չըջանակնե-
րուն այլև հազաւ անոնց հոգեղէն կերպա-
րանքները, ներշնչեց՝ բանաստեղծի պաշ-
տօնական իր դերը կրելով զուսպ, գիտակ-
ցուած զոհողութեամբ մը: Ու հասաւ բո-
լոր հոգիի կարօտներուն, իր հարապատ ցա-
ւին համար ինքզինքը տրամադրելով այն-
քան խնայուած տաղերու վրայ: Մենք
այսօր չենք կրնար չծածկել մեր ցաւը սա
քիչ արդիւնքին համար: Բայց չենք ալ
ընդարձակեր անոր հանրանուէր սպասին ի-
մաստը որ բանաստեղծութեան մէջ պարա-
զայականը ունի իրեն զսպանակ, որով և
իր խորքին մէջ կը կրէ մահուան իր տարրը:

Յ. ՕՇԱԿԱՆ

(Շարունակելի)



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽՈՐԵՆԱՑԻԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Մ Ո Ւ Ե Գ Ն Ո Ց Մ Ի Զ Ն Ա Ր Ա Ր

1

Գուտաճիտի գրութեանն վերջ, Խորենացիի ժամանակի խնդիրը այժմէական աւագ կարեորութիւն ստացաւ: Բանասէրներու համար ընդհանրապէս, Խորենացիի գրքին մանրազնին քննութիւնը, մասնաւորաբար ատոր գրութեան ժամանակը որոշելու համար, ալ աւելի հրապոյր ստացաւ, քան անոր լեզուական, բարացուցական, պատմագրական և ընկերային հին կարգերու մասին պահած ցուցմունքներու ուսումնասիրութիւնը:

Եւ ահա 1893ին փոքրիկ գրքոյկ մը կարծես թուժերը խորտակեց, և բանասիրութեան խոհական զեռը, մինչև այդ վաշիշահոս և կշռադատ, փրփրեցաւ և առանկիկալ մոլեղին յորձանքներով սկսաւ աջ ու ձախ փոթորիկի:

Բարիդի Արեւելեան Էնգուաց Դպրոցի մէջ Ասորերէնի և Հայերէնի ուսուցիչ Օ. Կիւստ Կարիէր կը գրէր վերոյիշեալ զբոքոյկը, Նորագոյն Աղբերք Մովսէսի Խորենացոյ (Վիեննա, 1893): Հազիւ 51 փոքրազիր էջեր:

Տարի մը առաջ, Կարիէր գրած էր թէ Խորենացիի գործը 460-480 տարիներու մէջ գրի առնուած է: Բայց այժմ, տարի մը վերջ, ան կը յայտարարէր թէ Պատմութեան յօրինման ժամանակը Ութերորդ դարէն առաջ կարելի չէր դնել:

Ի՞նչպէս:

Հակառակ գրքոյկի Յառաջարանին մէջ յայտնելուն թէ իր գրութիւնը Խորենացիի սմէկ կամ շատ աղբիւրանց վրայ լիակատար, լաւ կարգաւորուած և յղկուած, յարգարուած ուսումնասիրութիւն մը չէ՞,

Կարիէր կ'ըսէր թէ ինք Խորենացիի մէջ գտած էր նախադասութիւն մը, որ սերտ նմանութիւն ունէր և ընդօրինակուած կըրնար ըլլալ վկայաբանութեան մը, Vita Sylvestri (Վարք Սեանկելոյն Սեղբեստոսի Հռոմոյ Հայրապետին): Եւ, կը հետեցնէր Կարիէր, որովհետեւ այս կենսագրութեան հայերէն թարգմանութիւնը՝ Սոկրատի Եկեղեցական Պատմութեան Եթններորդ դարու վերջին տարիներուն կատարուած հայերէն թարգմանութեան ձեռագրին սկիզբը կը գտնուէր, ուրիշ Խորենացին Ութերորդ դարուն գրած ըլլալու էր:

Կարիէր ուրիշ սուրբերու ալ վկայաբանութիւններ ցոյց կուտար, որոնցմէ ալ Խորենացին օգտուած է կ'ըսէր: Այսպէս Vita Basilii (Վարք Բասիլիի) աղբիւր ծառայած էր Խորենացիի Պատմութեան Բ. Դրքի ԶԸ. Գլխին:

Տարի մը վերջ, 1894ին, Կարիէր իր վերոյիշեալ գրքոյկին Յաւելուած մը կը գրէր, — ախորժակը ուտելով կը բացուէր —, ուր այս անգամ Խորենացիի երկու ուրիշ աղբիւրներ ալ ցոյց կուտար, Մաղաղաս և Պրոկոպիոս: Երկուքն ալ յայտնի պատմաբաններ, և երկուքն ալ Հինգերորդ դարէն վերջ գրած:

Հ. Յ. Տաշեան, որ սոյն գրութիւնները հայերէնի թարգմանած էր, վերապահ մնաց կարծիք յայտնելու: Թէև Կարիէրի գրքոյկէն տարի մը առաջ, 1892ին, Հ. Տաշեան իր Ուսումնասիրութիւնք Սոյն Կալիսթիւնայ գրութեան մէջ կը ջանար ապացուցանել թէ Խորենացիի Պատմութիւնը Հինգերորդ դարու ութսունական թուականներուն գրի առնուած է, բայց Կարիէրի ելոյթէն վերջ լուռ կը մնար, կարծես հետզհետէ տաքցող պայքարի մէջ չէզոք մնալ որոշած էր: Եւ նոյնիսկ չէզոքութիւնն իսկ վրդովեցուցիչ պիտի գտնէր, քանզի տաս տարի վերջ, 1902ին, կը գրէր թէ, և . . . Դէմ ու թիր գրուածներու և ապացոյցներու այնպիսի խառնակութիւն մը, որ անիլ բաւիղ մը կը սպառնայ ըլլալ ամէն՝ այսպէս ըսենք՝ չէզոք բանասէրի համար, որ երկու կողման կարծիքներուն արժէքը կշռել փորձէ:

Ուրիշ բանասէրներու երկու բանականութիւն անընթեք մէջտեղ կուգար երրորդ խումբ մ'ալ, չէզոքները: Ինքնին անհեթեթ երեւոյթ մը բանականութեան մէջ:

Այս վերջինները կարծես կ'ըսէին, թէ եւ մենք ալ բանասէրներ ենք, և քաջածանօթ խորհնացիի Պատմագրքին, բայց վէճը այնքան սաստկացած է, որ մենք բերաննիս պիտի չբանանք, նայինք վերջը ուր կը հասնի:

Զարմանալիօրէն, այս երրորդ խումբին մէջ կը գտնենք անձեր, որոնք պէտք է արտայայտուէին: Ինչպէս, Եղիշէ Արք. Դուրեան և Մաղաքիա Արք. Օրմանեան:

2

Կարիէրի ներկայացուցած փաստաբուծութիւնները ոմանց կողմէ ընդունուեցան առանց այլեայլի: Ուրիշներն ալ բոլորովին անդոհացուցիչ կը գտնէին զանոնք՝ խորհնացին ուրիշ դարեր փոխադրելու համար:

Նիկողայ Մոսկ. Կարիէրի Մաղաղասեան փաստերը համոզեցուցիչ ըլլալէ շատ հետո՛ւ գտաւ:

Ֆրէտէրիկ Կոնիքեր, Օքսֆորտ համալսարանի ուսուցիչ և հմուտ հայագէտ Անգլիացին, կը պատասխանէր թէ Սեղբեստրոսի և Բարսեղի կենսագրութեանց յունարէնը արդէն Հինգերորդ դարուն գոյութիւն ունէր, և խորհնացիի պէս քաջ յունագէտի մը համար ոչ մէկ դժուարութիւն կրնար ըլլալ ի շարս շատ մը ուրիշ յունարէն աշխատութիւններու, որոնցմէ ոմանց թարգմանութեամբ զբաղուած էր տարիներով, կարդալ նաև վերոյիշեալ և ուրիշ վկայաբանութիւնները:

Կոնիքեր ալ իր կողմէ կ'եզրակացնէր թէ խորհնացիի աղբիւրը ոչ թէ Սեղբեստրոսի վարքն էր, այլ Ազաթանգեղոսի հնագոյն և աւելի ընդարձակ մէկ օրինակը:

Ս. Մալխասեան, յետոյ Սարգիսեան և Պարոնեան վարդապետներ և ուրիշներ հակառակ արտայայտուեցան Կարիէրի:

Իսկ Գաղիացիի ըսածները ընդունողներէն շատեր կարծես յաղթական հաճոյքով մը, երբեմն ալ քինախնդրական շեշտով, «Ամէն, եղիցի և եղիցի» կ'ըսէին:

Ֆէտտէր և կը շնորհաւորեր Կարիէրը, իր կողմէն ալ իր յայտնէր թէ Հինգերորդ դարուն ապրող Մովսէս Եպիսկոպոսին անուամբ և յետագային մատենագիր մը գործածած և Մովսէս խորհնացույ անուամբ շատ մը գործեր հրատարակած է, որ իբր

թէ Ե. դարէն եղած ըլլան: . . . Սակայն հաստատուն կը մնայ այն որ Մովսէս իր աղբիւրները բոլորովին կամայականօրէն կերպարանափոխ կ'ընէ և իր գաղափարները կը մուծանէ անոնց մէջ »:

Գարագաշեան իր Գննական Պատմութեան մէջ խորհնացին Եօթներորդ դար կը տանէր: Գեղեցիկ և ուրիշներ Կարիէրի իրաւունք կուտային, ու ըստ այնմ կը կատարէին իրենց մտամարդանքները:

Միաբան ծածկանունին տակ բանասէր մը խորհնացիի ուրիշ մէկ նոր աղբիւր ցոյց կուտար Դաւիթ Անյաղթը: խորհնացին, կ'ընէր ան, Դաւիթ Սահմանաց Գրոցէն հաստուած մը փոխ առած է, և որովհետեւ Դաւիթ գրութիւնները Հայոց մէջ յայտնի եղան Վեցերորդ դարու վերջերուն կամ Եօթներորդի սկզբին, ուրեմն . . .

Պայքարի հետաքրքրական (քիչ մնաց ըսելի ծիծաղաշարժ) փուլերէն մէկն ալ էր Մխիթարեաններու գիրքը: Վենետիկեաններ առ հասարակ Հինգերորդ-դարեան ըսող Հին Պահակին զինուորագրուած էին: Իսկ Վիեննան, Կարիէրէն աւելի Կարիէրեան Հարուածային Դուժարտակի առաջին գծերու վրայ կը գտնուէին:

Այս վերջինները նոյնիսկ հեղեական շեշտ ալ կրնային գործածել իրենց հակառակորդներուն դէմ: Հ. Գարբիէլ Մէնէվիլեան, Աբգարու Զրոյցը Մովսէս Խորհնացու Պատմութեան մէջ գրքոյկի թարգմանութեան իր Յառաջաբանին մէջ կը գրէր. « . . . Դուռը միտ թէպէտ չափազանց, բայց շատ սուր տեսութիւններ ըրած է այս մասին, որուն ի պատասխանի տրուած զրուածներուն մէջ, կարելի էր չտեսնել առաջին խմբին յատուկ պաշտպանութեան եղանակն, այսինքն — ազգասիրութիւն և միշտ ազգասիրութիւն . . . »:

Այսինքն, ըստ Հ. Մէնէվիլեանի, Հին Պահակը զբաղական վերլուծումէ խապար չունի, ուստի կը բանայ ազգասիրութեան հովանոցը, տեղատարափ փոթորիկէն ազատուելու համար:

Վիեննայի Մխիթարեանները խորհնացիական պատերազմի մէջ քաջալեր կը հանդիսանային ամէն անոնց, որոնք Պատմահայրը իր դարաւոր պատուանդանէն վարերելու համար որեւէ ձևի դէնք կը գործածէին: Նոյնիսկ երբ այդ ոչ միայն անհեթեթ, այլև անժայել զէնք էր:

Այսպէս, Վիեննայի տպարանէն հայ ընթերցողին կը հրամցուէր իբր թէ բանասիրական գիրք մը, փաւստս Բիւզանդացի եւ իր Պատմութեան Խաղախոյրը. հեղինակ, Բ. Դաղբաշեան:

Այս բարեկամն ալ, Հինգերորդ դարէն յետոյ ապրած մատենագիր մը փնտռելու, Զորբորդ դար՝ կ'երթար, Խորենացին այդ կողմէն ալ հարուածելու, որպէսզի խեղճ Մովսէսը ամէն կողմէ շրջապատուած, ալ զիմակը վար առնէ և իր խորագախոյրի գէմքը ցոյց տայ:

Այս խմատակի գրքին առաջին յիսուն էջերը չլրացուցած, հետեւեալներու կը հանգիւյս, որոնց յաւանք հասարակ մահկանացուներս աչքերնիս կը շփենք, ինչպէս նաև մեր ճակատները: Այս բանասէրները ի՞նչ կ'ընեն, այդ ալ իրենց կամքին:

«Առ այժմ մենք Խորենացու ցնդարանութիւնները մի կողմ թողնենք» (էջ 13):

«... Ահա մի նոր ապացոյց մեր զուգումալ պատմաբանի անբարեխղճութեան և այն ողորմելի հասկացողութեան մասին որ նա ունի պատմութեան վրայ» (17):

«... Նոյն կեղծիքն է անուամ Խորենացին» (20):

«... Խորենացին խաբրեայութեամբ փոխադրելով» (34):

«Այս ձերունին որչափ խաբդախ, նոյնչափ միամիտ է» (47):

Կը տեսնէ՞ք թէ հեղինակին չղազըրգութիւնը ինչպէս արագօրէն կը սաստկանայ, ու ան այլեւս չկարենալով համբերել, տակաւին 50րդ էջը չհասած, իր զիմացը տեսնել կը կարծէ խաբդախ ձերունին, ու ինքնիմէ ելած, կ'աղաղակէ.

«Ով ձերացեալ հրեանդոտ, որքան մեծ ծառայութիւն պէտք է մատուցած լինէիր քո ազգին, եթէ... Հարունակէիր քո թարգմանութիւններով զբաղուիր և ապագայ դարերու սերունդներին չթողնէիր քո կեղծ, անչունչ և անկենդան հայոց պատմութեան կմախքը» (48):

Իր ատենին այս տողերը կարգալով շունչդ բռնեցիր, երկիւղը սիրազ պատեց և դուն քեզի ըսիր թէ Խորենացի խեղճ լուծման յաջորդ հանդուրանին արդէն ատրճանակ և զաշոյն պիտի խաղան:

Ո՞վ զիտէ, թերեւս այդ աւելի հետաքրքրական լուծում մը տար թանձրացող ինչուկին:

Դաղբաշեանէն երեսուն տարի վերջ, դեռ նախատինքի տպարակէն ցելս կը չպըրգուէր Խորենացիի գէմքին: «Ընդունայնամիտ», «Անբարեխղճ», «Խաբդախ», «Մտախոս», «Մուրացիկ բարքով», «Հերետիկոս», և այլն:

Ինքնընտիր զայրացած դատախազներու ոպանական ցուցամատներն էին, որ օղը կը սղոցէին և Պատմահայրը ցոյց տալով կը գոչէին. Լաւ նայեցէք սա մարդուն, Մովսէս Խորենացի, որ կը համարձակի իր պատմութեան մէջ գրել թէ ինք աշակերտ եղած է Սահակի և Մեսրոպի, բայց եկուր տես որ իր յիշած ժամանակէն հարիւր, երկու հարիւր, կամ աւելի տարիներ վերջ երեցած գործեր իրեն զաղտաղողի աղբիւր գործածեր է:

Այսպիսով խաբրեայ կեղծարարի մը պատկերն էր որ կը ներկայացուէր և կարծես հայ ժողովուրդին կը թեկադրուէր իր մշակոյթի յոյժ թանկարժէք մէկ գլուխ գործոցի հեղինակին նայի որպէս անբարեխղճ խաբդախոյրի մը, որու չարագործութեան պատճառաւ իր զիրքն ալ կը դաղրի արժանահաւատ բան մը ըլլալէ:

3

Այլեւս ինքնակոչ կամ ալլակոչ բանասէրներէն ոմանք չոգեպինդ գործի լծուեցան, որոնելու Հինգերորդ դարուն յաջորդ ժամանակաշրջաններէն աղբիւրներ, և հանելուկ լուծողներու անյազ հետաքրքրութեամբ ջանացին նորանոր կեղծարարութեան հետքեր երեսն հանել:

Անոնցմէ ոմանք երբ առաջին անգամ Խորենացին ուսումնասիրելու կը ձեռնարկէր, իր զիրքը դեռ չբացած, որպէս բացարձակապէս ապացուցուած իրողութիւն կ'ընդունէին Խորենացիի Հինգերորդ դարու մատենագիր չլլալը, ու իրենց հետագայ պրպտումներուն ըստ այնմ ուղղութիւն տալով յաճախ ապշեցուցիչ զիւտեր կ'ընէին:

Պատմագրքին զլուսները կ'ենթարկուէին վիրաբուժական գործողութիւններու: Նախադասութիւններու կապերը կը քակուէին տեսնելու թէ հոսեր կամ տակը թաքնուած բան մը կա՞յ: Պարբերութիւններ տարրալուծական փորձերէ կ'անցնէին, և բազմատական մանուածապատ պրպտութեամբ:

ներ մատ խածնել կուտային ի տես ցոյց տրուած ճարպիկութեան:

Իսկ այն երկուստ հոգիները, որոնք տակաւին կը համարձակէին խորհնացին Հինգերորդ դարու հեղինակ համարել, այժմ խուճապահար նահանջի կը սկսէին: Այլևս ի պատուի նորածնութիւն էր հայ բանասիրութեան մէջ մերժելով մերժել խորհնացիի Պատմութեան Հինգերորդ դարու գործը լլլալը: Եւ մինչև որ այս հիմնական կէտը չընդունէիր, ընտրեալ շրջանակէն ներս պիտի չընդունուէիր:

Վեր պիտի առնենք առաջնակարգ անուններ միայն, քանզի անոնք առաջնորդող բանասէրներ կը համարուէին, որոնց աւագ պարտականութիւնն էր բանասիրութիւնը պահել իր գիտական շարիղին մէջ, և իրենց քննական աշխատանքներու խոհուն և տրամաբանական մեթոտիկ ընթացքով, օրինակ հանդիսանալ կրտսեր մշակներու: Անոնց որ շատ տրուած էր, շատ ալ պիտի պահանջուէր:

Բայց եկուր տես որ անոնցմէ ոմանք մեծագոյն մեղանշողները եղան:

Ահա Գրիգոր Խալաթեանցը:

Ան 1883ին հրատարակուած մէկ գործով, Ղազար Փարպեցի եւ Գործն Նորին, կը պնդէր թէ Փարպեցին՝ թէև Ագաթանգեղոսը, Փաւստոսը և Կորիւնը միայն կը յիշէ, սակայն իրեն քաջ ծանօթ էր Խորհնացին ալ, որուն անունը չյիշեր: Եւ ըսածը ապացուցանելու համար տքնաջան աշխատանքի կը նուիրուէր երկու մատենագիրներու գործերէն հատուածներ գէմ գլխաց դնելու, որպէսզի համոզէ ընթերցողը թէ Ղազար փոխ առած էր Խորհնացիէն:

Ֆրանսացի Կարիէրի տեսարանները կարգալէ վերջ, այս բազմահմուտ «Ուսուցչական» կարծես Դամասկոսի ճամբուն վրայի Սողոսը ըլլար, որ Կարիէրեան փայլատակուէն, աչքերէն թեփ թափուող Պողոսի փոխուեցաւ, կը մոռնար իր վերայիշեալ զրքի երկարապատում փաստարկութիւնները, և հանգարտ սրտով կը գրէր:

«Եթէ հաստատուին այս կարծիքները, որ ըստ իս շատ մօտ են հաւանականութեան, այն ժամանակ ալ կերպարանափոխութիւններ թուուի անհրաժեշտ կը լինի ընդունիլ նաև որ ոչ թէ Խորհնացին էր՝ իրրեւ Հինգերորդ դարու երկրորդ կիսու մատեն-

ագիր, նոյն դարու վերջերը և Վեցերորդ դարի սկիզբը ծագած Փարպեցու աղբիւրը, ինչպէս ենթադրել էի, ալ ընդհակառակը» (Համդէս Ամստեայ. 1895 Ապրիլ):

Շատ չանցած հաւանականութիւնը արդէն անթեքելի համոզում կը դառնար իր մէջ, և Խալաթեանց թեւերը սոթտած ու նորաբորոք աւելնով նետուեցաւ կրկէս, իրեն սրտին շատ մօտ սիրական մեթոտով մը, որ կը կայանար բաղդատական մէջրեւումիներով Խորհնացիէ և զանազան հեղինակներէ, ինչպէս Փղքը Սոկրատ, Վարք Սեղբեստրոսի, Հին Կտակարան, Ղևոնդ, և այլն, ու այս օրագրատութիւններէ եզրակացնել թէ Խորհնացին օգտուած է անոնցմէ:

Անոր բաղդատութիւնները, Խորհնացիի վերագրած փոփոխութիւնները, բռնագրօսիկ բաներ էին, որոնք յաճախ ստեղծական և սովորական բառերէ կամ գաղափարներէ անդին չէին անցնել: Այս մեթոտը Խալաթեանց պիտի ծագեցնէր այն աստիճան, որ բացարձակ աշխարհականութեան պիտի հասցնէր: Լաւ կ'ըլլայ որ Աշխարհականութիւն բառին ընկեր տանք նաև Ծիծաղելին:

Իր Հայ Վեպը Մովսէս Խորենացու Պատմութեան մէջ (Մոսկուա, 1896), Խալաթեանց՝ Ղևոնդի Պատմագրքին հետ բաղդատելով Խորհնացին, ինքզինքին թոյլ կուտար Խորհնացին բանագող կոչելու, և կ'հզրակացնէր թէ Ղևոնդն ալ Խորհնացիին նիւթ հայթայթեր էր: Եւ որովհետև Ղևոնդ իր պատմութիւնը գրի առած էր 790 ազան թուերուն, հետեաբար Խորհնացիի գրութեան թուականը կը հասնէր մինչև իննեւորդ դարուն սկիզբը:

«Ուսուցչական» չգոհացաւ Խորհնացիի բանագողական մարզանքները սահմանափակ ասպարէզի մը մէջ պարփակելէ, ալ Պատմահայրը ճկուն ճարպիկութեամբ մը օժտելով, ընդարձակեց անոր դժպիհ գործունէութեան շրջանակը: Այսպէս, Խորհնացին կը տեսնէինք որ հայ կեանքի հետ բոլորովին անյարիր պատմական դէպքեր կրնայ առնել, և սատանայական վարպետորդութեամբ անոնցմէ շարահիւսել դէպք մը որ հայկական է: Խալաթեանց կը մերժէր ճանշնալ Գողթան երգերու և վիպատանութիւններու գոյութիւնը:

Զոր օրինակ, Խալաթեանց կը գրէր թէ

Խորհնացին Հին Կտակարանէն ետեւի պատմութիւնը վեր առած էր, և անիկա տարբարեցնելով, (մի վախճար այս բառէն, ատկէ ուրիշ ինչ բառ կրնամ գործածել՝ կատարուածը ներկայացնելու), չափափելով, կարատելով, մանրուկներ աղուցանելով, յաջողած էր յարմարցնելու գրուածք մը, որը հայ ժողովուրդին կլիցուցեր էր որպէս Արտաշէսի և Սաթենիկի պատմութիւնը:

Մտադ կը խածնես որո՞ւ ճարպիկութեան ի տես, Խորհնացիք թէ Խալաթեանցի: Թերևս Խալաթեանցի, երբ նկատի ունենան թէ ինչպիսի հմտական մանուածապատ հանգոյցապատու ձևերով կը կառուցանէր իր առաջագրածը, և համբերատար թորգումեան ցեղի զաւակներուն վերջապէս կը յայտնէր անոնց այնքան սիրելի Արտաշէս-Սաթենիկ վրպական զեղեցիկ գրուածքի ծնունդը: Ախրս, ապօրինի ծնունդ:

Զարմացայ որ Մանուկ Աբեղեան և Ն. Աղոնց պէտք տեսած էին, կամ ձանձրոյթը յանձն առած, Խալաթեանցի այս մարզանքին պատասխանելու և ըսելու թէ ըրածը անհնթիք բան էր և ծաղրելի:

Խալաթեանցի համար այլևս անթիքելի մտասեւեռում դարձած էր Խորհնացիք ուրիշ աղբիւրներէ ըրած անհաշիւ մաքսանկեղութիւնները, որոնցմով միայն Պատմահայրը յաջողած էր մի կերպ շարադրել իր պատմութիւնը:

Այս մտասեւեռումը Խալաթեանց առանց տատամսումի կը յայտնէր իր Մովսէս Խորենացու Նորապոյն Աղբիւրներու Մասին (Վիեննա, 1898), զրքոյկին մէջ:

«Եւ այսպիսի ծաղկաքաղը մանաւանդ թարգմանական գրուածքներից . . . Խորհնացու սիրածն է, նորա բնորոշող մասեւնագրական եղանակն է, որ տեսնում ենք նորա Պատմութեան համարեա ամէն մի երեսում, — այն է՝ հայերին ամենին վերաբերութիւն չունեցող, բայց օրեւ կողմից հետաքրքրական նկարագիրները, ասացուածները անգամ և կարճ դարձուածները յարմարցնել իւր հայրենակիցներին, իւր նկարագրած անձնաւորութիւններին» (էջ 23):

Մաղկաքաղ . . . նորա Պատմութեան համարեա ամէն մի երեսում! Երբ այս անդրդուելի համոզումով ճամբայ կ'ելլես, տարակոյս կրնաս ունենալ որ զարմանազան գիւտեր պիտի ընես, և ապուշ կրթես ընթերցողների մէկէ աւելի կերպերով:

(Շար.՝ 3)

ՀՐԱՆԴ Ք. ՈՐՄԷՆ

ԳԵԼԳԱՍԷՇԻ ԴԻԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

ԲԱԼԴԱՏԱԿԱՆ ՄԵՐՁԵՑՈՒՄ ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ
ԵՒ ՍՈՒՄԵՐԱԿԱՆ, ԲԱՔԵԼԱԿԱՆ ԵՒ ՅՈՅՆ
ԶՐԶԵՂԵՂԵԱՆ ԶՐՈՅՆԵՐՈՒ

Աղբիւրներ. — Ա. Սուրբ Գրական. — Զրհեղեղեան հասարակաց սկզբնական աւանդութեան մը երկու ազատ ճիւղաւորութիւնը կը հանդիսանան Ծննդոցի Զ. 5-թ. 17 համարները: Ենթադրուած Աստուծոյ անուններուն զերակշռութիւնը մէկին և միւսին մէջ, կ'արգարացնէ անոնց բաժանման իրաւունքը:

Ս սկզբնատառով կը մատնանշենք եւ հովայեան բաժինը. — Ծնն. Զ. 5-8. է. 1-5, 7-10, 12, 16բ, 22, 23. Ը. 2բ, 3ա, 6-12, 13բ, 20-22:

Է ով էլօհիմեանը. — Ծնն. Զ. 9-22. է. 6, 11, 13-16բ, 17 (նուազ քառասուն օր) — 21. Ը. 1-2ա, 3բ-5, 13ա, 14-19. Թ. 1-17: Dictionnaire de la Bible, Supplément, Paris, 1928, էջ 754:

Բ. — Բեւեռագրական. — ա) Բաբելական. — Գլխաւորը Գիւգամէշի զիւցաղների գութեան տասնմէկերորդ տախտակն է. բ) Սուրբական. — Նիփուրէն արտահոգուած արձանագրութիւն մը, հրատարակուած, A. Poebeli կողմէ իր Historical and Grammatical Texts, Philadelphia, 1914, տախտակ առաջին, թարգմանուած նոյն հեղինակին կողմէ իր Historical Texts, Philadelphia, 1914, էջ 18 և այլնի մէջ:

Գ. — Եւրեական բնագրեր Բաբելական բնոյթով. — ա) Պերոգի բեկորը, Eusebi chronicorum libri duoի մէջ, հրատարակուած Alfred Schoeneli կողմէ, հատոր առաջին, Berlin, 1875, սիւն. 20-24: Բ) Պերոգի ամփոփումը Ապիտէնի կողմէ, ահ'ս P. Schnabel, Berossos und die babylonisch-hellenistische Literatur, Leipzig & Berlin, 1923, էջ 164 և այլն: Բնագիրը Eusebi chronicorum libri duoի մէջ, հրատարակուած Schoeneli կողմէ, հատոր առաջին, սիւն. 32-34: Թարգմանուած H. Useneri կողմէ Die Sintfluthsagen, Bonn, 1899, էջ 15, և B. Bonkampfi Die Bibel im Lichte der Keilschrift-

forschung/ մէջ, Recklinghausen, 1939, էջ 131-32:

Գաղափարական երկու խոր խրամատներ կ'անջրպետեն Հին Ուխտի և Միջագետքի և ջրհեղեղի անստուգելի ուժի պատճառով: Մորապան Մատենագրութիւնը երբայեղներուն, ջրհեղեղի գրոյցը գերազանցապէս իմաստաւորողն է: — Իր վերջին անստուգելիութեամբ և բ. — Բարոյական կորոյի զսպանակաւորումին, կը ստուերաքողէ ան. — Ունայնասէր և սագրանամիտ խմբակը բարեխաղան աստուածներուն և բ. — Անոնց հրամանագրած քմահաճ արարքը ջրհեղեղի:

Ջրհեղեղի թաքուն շարժառիթը Մընընդոցի էջներուն մէջ, մեղքի տրոյմով կ'ըսած վատանքողներուն լղիւր կեանքին արդար պատուհասումն է: Չարութեամբ տոգորւած հոգիներուն ոչնչացման պատգամը, Մըն. 2. 5. «Եւ իբրեւ ետես Տէր Աստուած եթէ բաղմացան չարիք մարդկան ի վերայ երկրի, և ամենայն ոք խորհեր ի սրտի իւրում խնամով ի չարիս գամենայն աւուրս»: Իսկ երկիւղածն ու իր ընտանիքը չի վրիպեցան տարբերու և էակներու միակ Արարչին արդարադատ ատենէն, Մըն. 2. 9. «Եւ այր արդար Կատարեալ էր յազգիանդ իւրում. և հաճոյ եղև նոյ՝ Աստուծոյ», Մըն. 2. 13-14. «Եւ ասէ Տէր Աստուած ցնոյ, ժամանակ ամենայն մարդոյ հասեալ է առաջի իմ, զի լցաւ երկիր անիրաւութեամբք ի նոցանէ, և ահա ես ապականեցից զնոսա և զերկիր: Արդ, արա դու քեզ տապան ի չորեքիւստի փայտից, խորշս գործեցես պտապանն, և նախքին ձեկեցես զնա ներքոյ եւ արտաքոյ: Միաստուածութեան արնիթեր, բարոյական չափանիշերու հզօր տիրապետում մը կը բնութագրէ ջրհեղեղեան գրոյցը Հին Կտակին: Մինչ գաղափարական ներհակ յղացում մը, խնդրուած անտաշ բազմաստուածութեամբ մը, և ջրհեղեղեան աղէտի քմայքոտ ծրագրումով մը, կը պայմանաւորէ գոյութիւնը սուսերական, բարեխաղան, և յայն ջրհեղեղեան գրոյցներուն: Չեւի և խորքի սերտ խնամութիւն մը կը զօղէ այս երեք գրոյցները իրարու:

Գիւղամէշի գիւցազներգութիւնը՝ տախտակ տանըմէկերորդ, համար տանըջորս, կը բանաձեւէ սապէս մանկամիտ հրամայա-

կանը ջրհեղեղի թէ իրենց՝ (աստուածներու) սիրտը մեղք մեծ աստուածները իրաւանացնելու ջրհեղեղը: Մտածումն է նոյն շեշտը կ'արձագանգուի նաև Աթրախտի գիւցազներգութեան մէջ, թէ ջրհեղեղը գոյացուցաւ, քանի որ մարդիկ իրենց ազնաւորից ու զուարթ հաւաքոյթներով կը խռովէին էնիլի աստուծոյ նինջը: Գիւղամէշի գիւցազներգութեան, տախտակ տանըմէկերորդ, համար 168-170, Իշտար գիցուհին կ'ատմէ քնքերուն մրուրը կը քէ էնիլի աստուծոյ ճակտին, որովհետեւ ան խորհրդարար յառաջ բերաւ ջրհեղեղը, և առաջնորդեց իմ մարդիկը փճացումին: էնիլի աստուած մեղաւորն ու անմեղը անխտարար Մեծ Աղէտին զոհ դարձնելու սեւթոյր մաղձը կը հեղու իր քինախնդիր արտաբերումին մէջ, տախտակ տանըմէկերորդ, համար 173 «Խուսափա՛՛՛՛ է արդեօք մահկանացուներէն անէ մին, ոչ ոք պէտք է վերադրի աւերէն»:

Տիգրիս-Եփրատեան հովիտէն կտակուած ջրհեղեղեան գրոյցը, չէ շարժառիթուած ոչ մէկ բարոյական որոնումներով, արդար և չարը զիրքաւորելու արամբանական նախանձախնդրութենէ մը: Ուտնալիշտիմին՝ այդ Բարեխաղան նոյն ապտաղութեամբ ջրհեղեղի համայնակուլ մահասարսուռէն, չի թելադրէր արդարամտութեան մը երաշխիքը, քանի որ, էա աստուած ժողովանիստ աստուածներուն հակառակ, գաղտագողի ուղիով, քսութեամբ չի փութանցեց ջրհեղեղի վաղահաս գալուստը Ուտնալիշտիմին: Հին Ուխտի գրականութեան մէջ, Ենովայի կամ Էլօհիմի մը վահաւաք թլուրեղացումը, մարդոց որդիներուն նկատմամբ իր ուղղամիտ չփումը, այս պարագային ջրհեղեղի գրոյցին մէջ խորհրդանշուած, ակնբախ հակապատկեր մը կը ցուցադրէ, քմահաճիկ հոգեբանութեանը հանդէպ իրարու դարանակալ բարեխաղան աստուածներու խմբակին, տախտակ տանըմէկերորդ, համար 113 «աստուածները սարսափեցան ջրհեղեղէն, խոյս տուին և բարձրացան երկինքը Անուի, աստուածները կկղեցան շուներու հանգոյն, Իշտար կը ճշայ երկունքի մէջ տուալտող կնոջ մը պէս, յիրաւի հին ժամանակները ցեխի վերածուեցան, որովհետեւ չարքը քսի հաւաքոյթին մէջ աստուածներուն, Անուննադի աստուած-

ները լացին անոր հետ: Տակաւին, անոնց զազրելի որկրամոլութիւնը կը բարացուցուի յետ ջրհեղեղեան օրերուն, Ուտնապիլշտիմի զոհամատոյցին առիթով, տախտակ տասներմէկերորդ, համար 159 պատուածները հոտուրտացին հեշտահամ բուրումը, ճանճերու նման շրջապատեցին զոհարարը:

Հին կտակի և սումերական, բաբելոնական և յոյն ջրհեղեղեան զրոյցներու միջև, կմախքային հանգիստութիւններու գոյութիւնը, կը բղխի նոյնինքն ջրհեղեղի գաղափարի մը խելութիւնէն, ուր մարդկային միտքը, ամենուրեք իր նոյնը ըլլալու գրոշմով, ջրհեղեղի տուեալ իրողութեան նկատմամբ, հասարակաց եզրերու մը ըմբռնողութեան կիրարկումը, պիտի չթուէր անսովոր երևոյթ մը, սապէս Ա. — Բուր պատմութիւններուն մէջ, ջրհեղեղի աւետարարը Աստուած է. Ենոփա կամ Էլօֆիմ, էա Գիլգամէշի մէջ, հաւանաբար էնքի (= էա) սումերականին մէջ, Խրոնօս մը Պերոզի և Ապիտենի մէջ: Բ. — Ազատագրումի լաստը, բնական հետեւողութեամբ մը նաւ մըն է, ուր կը պատուարուն փրկուելու սահմանուածները՝ մարդ և անասուն: Սումերական արձանագրութեան մէջ, անասունները յայտնապէս չեն յիշատակուած, բնագրային լրատի մը զոհը հաւանաբար, այն ապացոյցով որ, ջրհեղեղի վերջաւորութեան սումերական նոյն՝ Զիւսուտրան եղի և ոչխարի զոհեր կը մատուցանէ Պապպար՝ արև աստուծոյ: Ապիտենի ընդհատն ալ կը լեցուի Սիսիթհրօսի թռչուններ արձակելովը: Գ. — Իբրև վախճան մեծ աղէտին կ'եզրակացուի ոչնչացումը համայն կենդանի էակներուն, տապանի բնակիչներուն բացառութեամբ:

Ուրիշ հանգիստութիւններ ևս այս վերջիններուն առընթեր, չեն սեռիր անտարակոյս շօշափուած նիւթին խելութեան մը թելագրան քէն: Հաստատենք օրինակներով: Ա. — Արտագրական և թարգմանական երփներանգ քօղի մը ներքև, ջրհեղեղի հերօսին անունները՝ Ուտնապիլշտիմ — բուքու՝ Գիլգամէշի զիւցաղներգութեան մէջ, Զիւսուտրա՝ սումերական արձանագրութեան մէջ, Սիսութհրօս՝ յունական բնագրերուն մէջ, և շատ հաւանաբար Սուր Գրական նոյն, միևնոյն անձնաւորութիւնն է որ կը մատնանչեն ստուգարանութեան քիւրեղա-

ցնող լոյսին տակ: Արդ, սումերական Զիւսուտրան՝ Զիւսութհրօս և Տիւսութհրօս արտագրութիւններով Պերոզի և Ապիտենի զրոյցներուն մէջ, կը համապատասխանէ Գիլգամէշի զիւցաղներգութեան Ուտնապիլշտիմ — բուքուն որ կը նշանակէ «ան որ երկարաձգուած էր գալով կեանքի օր(եր)ու» կամ «հեռաւոր օր(եր)ու կեանք» և նոյն՝ Երր. ԴՅ, իր ոչ թէ երբայական «հանգիստ» իմաստով, այլ եթովպական «նախա» արմատով, որ կը նշանակէ «երկար ըլլալ, երկարաձգուել», որուն ամանցեալ գոյականը «նուխ»՝ երկարութիւն (ժամանակի): Արդ, ԴՅ՝ նոյն hypocoristique անուն մը շարունակ ներքև, կրնայ նշանակել «երկարը, երկարաձգուածը» (գալով իր կեանքի օրերուն), Dillmann, Lexicon Linguae Aethiopicae, Lipsiae, Weigel, 1865, սիւնակ 671, 672, Dictionnaire de la Bible, supplément, Lonis Pirot, Paris, 1928, սիւնակ 750: Բ. — Տապանին կայանը գրեթէ նոյն վայրը կը յիշեցնէ՝ լեռները հիւսիսային Բաբելոնի (Գիլգամէշի տասներմէկերորդ տախտակն է որ նինձիր լերան գագաթը կ'ընտրէ իբրև խորխոս): Գ. — Թռչուններու զրուագը որոշ պատահական փոփոխակներու աղճատումովն ու յուելումովը, մշակուած է միանգամայն չորս զրոյցներուն մէջ, Ենոփայան, Գիլգամէշի, Պերոզի և Ապիտենի:

Յիբուցան սա քանի մը զուգահեռական տողերու սակաւութիւնը չի վարկածեր Հին Ուխտի գրականութեան կողմէ ուղղակի փոխառութեան մը մակերեսային դատումը Միջագետեան զրոյցներէն: Այդ անհիմն վճիռը կը կքի երկու պատմութիւններուն միջև, մանրամասնութիւններու անթիւ խոտորներով, տառական յիշատակութեան բացակայութեամբ, ու գերազանցապէս Հին կտակի՝ մեծ աղէտին տիրապետող արևաշող միաստուածութեամբ ու փոռապանծ բարոյական բարձունքին: Աստուածային ոգևոր շունչը կը կենսաւորէ Հին Եբրայական Սրբազան Մատենագրութեան ջրհեղեղեան զրոյցին կմախքը: Պատճառի և արդիւնքի ուղիղ համեմատութիւն մը կը բնութագրէ Սրբազան Ժառանգին պատմութիւններուն նկարագիրը: Մինչ անշաղախ գաղափարներու և գէպքերու կոյտ մը կը կազմեն զիպուածով ղեկավարուող զրոյցները սումերական, բաբելոնական և յոյն արձանագրութիւններուն:

Սա բնագրային խաժամուժին մէջ, Հին Կտակարանի շրջապատէն ներս, կարգ մը փոքրաթիւ և երկրորդական հանգիստութիւններու սպրդումները կ'արդարանան հետեւեալ մեկնաբանութեամբ: Աբրահամի քաղաքացւոց Ուր քաղաքի բնիկն ըլլալու հանգամանքը, Ծնն. ԺԱ. 31 «Եւ առ Թարա զԱբրամ զորդի իւր, և զնաքով զորդի իւր, և զԴովտ՝ զորդի Առանայ որդւոյ իւրոյ, և զՍառա զնու իւր, զկին Աբրամու որդւոյ իւրոյ, և նան զնոսա յաշխարհէն Քաղղէացւոց (եբրայական բնագիրը ունի כְּשֵׁם אֲרָם, մէուր քաստիւ՝ յԱրէ քաղղէացւոց), և եկին մինչև ցՍարան, և բնակեցին անդ», և իր հօր և նախահայրերուն հոն օտար տանները յաճախելու պարագան, Յես. ԻԴ. 2 «Եւ խօսեցաւ Յեսու ընդ ամենայն ժողովրդեան և ասէ, այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայելի, յանկոյս գետոյն պանդխտեցան հարքն ձեր յառաջագոյն, Թարա՝ հայր Աբրահամու և հայր Նաքովու, և պաշտեցին զաստուածս օտարս», կը թելադրեն այն հաւանականութիւնը, որով Նահապետը լքելով իր երկիրը, իրագործելու համար ճշմարիտ և մի Աստուծոյ հրաւերը, փոխադրած ըլլայ իր յիշողութեան մէջ աւանդութիւնները իր հայրենակիցներուն: Այս գրոյցները, մերկացուած իրենց հեթանոսական պատմութեանէն և վրէպներէն ներգործութեամբը Աստուծային Յայտնութեան, կը ժառանգուին նախ բերանացի, ապա թերևս գրաւոր կերպով, իր շառաւիղներուն միջև, կերպարելով այսպէս երկու զուգահեռական հոսանքներ՝ Եհովայիւնը և Էլօհիմեանը, զորս Մովսէս կը ներամփոփէ զանոնք, գրեթէ առանց փոփոխելու առանց յապաւելու կամ աւելցնելու, իրենց փոխանցման նախնական տրւումով, Ծննդոցի էջերուն մէջ. Supplément, Dictionnaire de la Bible, L. Pirot, սխալ 764-766: Ստորև կը ներկայացնենք համապատկերը ջրհեղեղեան գրոյցին սկզբնական աւանդութեան իր զանազան ճիւղաւորումներով:

ԱՆՈՒՇԱԻԱՆ ԱՔԴ. ՉԴՋԱՆԵԱՆ
(Շարունակելի՝ 4)

ԵԿԵՂԵՅԱՆ-ՊԵՏՐԱԿԱՆ

“ՄԵՐ ՆԱԽՆԵԱՅ ՀԱԻԱՏՔԸ”

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Բազմալեզու մէջ, շարունակելով իր յօդուածը, Ս. Ներսէս Ծնորդալիի և Ս. Պետրոս Առաքեալի մասին, Հ. Ներսէս Տէր Ներսէսեան կը հրամցնէ իր ընթերցողներուն սխալ մեկնաբանութիւններու և կանխակալ կարծիքներու ճոխ հիւսուածք մը: Քննենք:

1. — «Ս. Հայրերու երկերը մեկնելու մէկ կարևոր սկզբունքին վրայ» բացատրութիւն տալէ յետոյ Հ. Ն. Տէր Ներսէսեան կը գրէ. «Այս սկզբունքին դէմ կը մեղանչենք, եթէ յստակ բացատրութիւնները անտեսած՝ ենթադրեալ մթին հատուածներուն մէջէն որսանք մեր կանխակալ կարծիքին մօտեցող զաղափարներ ու մնացածը ծածկենք. այսպէս է, գԺբախտաբար, Ն. Եպս. Ծովականի պարագան» (Բազմալեզու, 1954, էջ 22). — Ն. Եպս. Ծովականի պարագան ճիշդ ատոր հակառակն է բարեբախտաբար: Վասնզի ան Ն. Ծնորդալիի «Եղեկոյ Ողբոյն մէջէն որսացուած և Հայ Հոռմէականներու կանխակալ կարծիքին մօտեցող ծանօթ «Եւ զու Հոռմ...» հատուածին միջոցաւ անոր հեղինակին անունը շահագործողներուն սխալ ընթացքը ցոյց տուած և Ս. Պետրոս Առաքեալի մասին Ս. Ն. Ծնորդալիի հարազատ տեսութիւնը ներկայացուցած էր, յիշատակելով բազմաթիւ և յստակ վկայութիւններ նոյն Աբրահամի Հայրնային տին զանազան գրուածքներէն:

2. — Էջ 23. — Դեր. յօդուածագիրը կը գրէ. «... և Պետրոսի պիտի յանձնէր երկնքի արքայութեան բանալիները, այսինքն՝ եկեղեցական գերագոյն իշխանութիւնը»: — Սխալ մեկնաբանութիւն: «Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից, և զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եզիցի կապեալ յերկնի, և զոր արձակեսցես յերկրի՝ եզիցի արձակեալ յերկնս» (*): «Եկե-

(*) Մատթ. ԺԶ. 19.

ղեցական գերագոյն իշխանութեան» արւելութիւն չկայ հոս, այլ կապելու և արձակելու: Այդ միւսնոյն իշխանութիւնը տուաւ Քրիստոս միւս աշակերտներուն ալ: «Ամէն ասեմ ձեզ, զոր կապեցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակեցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս»(*): Դարձեալ: «Առէք Հոգի Սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեզս, թողեալ լիցի նոցա, եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի»(**): Ուրեմն Ս. Պետրոսի «եկեղեցական գերագոյն իշխանութիւնը» կը մնայ լոկ հռոմէական կանկանխակալ կարծիք և սխալ մեկնաբանութիւն, և միայն Պետրոս չի կարգուիր «տեսանելի և երկրաւոր եկեղեցւոյ գերագոյն հովուապետ»:

3. — Գեր. յօդուածագրին ճիշդը, նշուածեցնելու Աւագ Ուրբաթի Ծարականին վարդապետական արժէքը, դատապարտուած է ձախողութեան: Ան կրճատած է մեր յիշած վկայութիւնը, որպէսզի յաջորդէ ինչ վրայ կարենայ ըսել թէ «աւուր պատշաճի շարականի մը մէջ չէ կարելի վարդապետական տեսաբանութիւն մը ամբողջապէս ամփոփել» (Բազմ. էջ 24): Բայց եկուր տես որ մեծ աստուածաբան և բանաստեղծ Ծնորհալին կրցած է իր կուռ գրիչով քանդակել սա սրտայոյզ տողերը. «Այսօր ըզվէմըն հաւատոյ՝ շարժեալ փորձողին խաբէութեան մարտ, առ ի քէն թողացուցեալ՝ ըզմարդկային տկարութիւնս յանդիմանելով, և առ յոյս դարձի մեղաւորաց, որ դառնապէս արտասուելովն՝ ընկալաւ ի քէն երիւք հարցմամբ սիրոյն՝ զերից ուրացութեանցն զբրժըչկութիւն»(**): Տողեր՝ որոնք ամբողջ «վարդապետական տեսաբանութիւն» մը կ'արժեն:

4. — Վենետիկեան յօդուածագիրը յայտնի ջանք մը կ'ընէ թեթեւեղութեամբ Պետրոս Առաքեալի ուրացութեան չափազանց ծանրակշիռ յանցանքը, մոռնալով որ թեթեւ յանցանքի մը համար հարկ պիտի չըլլար «զառնապէս» լալ:

5. — Գեր. յօդուածագիրը «նկատելի ամենէն էական կէտը» աջ ու ձախ դարձնելէ յետոյ կ'եզրակացնէ. «աւելին կուգայ ն. եպոս. Ծովականի գրիչէն, որ կ'ուզէ

Ծնորհալի բերանը դնել իր անհիմն վարկածները» (էջ 25): Ահաւասիկ մեր գրածը. «Այս խօսքերով յատկօրէն կը պարզուի թէ ըստ Ծնորհալի Հայրապետին սիրոյ երեք հարցումներով Յիսուս քաւել կուտար իր աշակերտին երբեակ ուրացութեանց չափազանց ծանրակշիռ յանցանքը: Յիսուս իր ուրացող աշակերտը կը կոչէ անոր նախկին անունով՝ Սիմոն Յովնանու, և երեք անգամ կը հարցնէ իրեն. «Զիս կը սիրե՞ս». մինչև որ կը տրտմի յանցաւորը, և Յիսուս տեսնելով անոր զղջումը և դարձը, զայն վերստին կը հաստատէ իր առաքելական պաշտօնին մէջ և կը հրամայէ անոր որ իր «զառնակներն ու ոչխարները արածէ»(*): Այսպէս կը գրէր նաև Ծանկեցի Ղազար Աստուածաբան Վարդապետը. «Եւ դարձեալ՝ զի երեք հարցմամբն զոր եհարց Տէրն առ Պետրոս, բժշկեաց զմեզս երից ուրացութեանցն և հաստատեաց ի նա զճնորհս անաքելութեան»(**): Յայտնի հոգեւորական մըն ալ, որ ապահովաբար ճշտադանդ մեկնիչ» մը չէ, կանխակալ կարծիքներու յանկերգին սկսելէ առաջ կը գրէ. «Պետրոսի սիրոյ երեք խոստովանութիւնները կը համապատասխանեն երեք ուրացութիւններուն, որով աշակերտներու առջև Պետրոս Առաքեալ իր նախկին գիրքին կը բարձրանայ»(***)։ Մեր վերոգրեալ տողերը «անհիմն վարկածներ» չէ որ կը ներկայացնեն, այլ հաստատուն իրողութիւններ, այսինքն Յիսուսի կողմէ ուրացող աշակերտին ոչ թէ Պետրոս, այլ իր նախկին անունով «Սիմոն Յովնանու» կոչուելը, և անոր «տրտմիլը» փոխանակ ուրախանալու, քանի որ իրեն կը տրուէր «գերագոյն հովուապետութեան» պաշտօնը: Այս ծանրակշիռ իրողութիւնները թեթեւօրէն մէկդի զրուած են Վենետիկեան յօդուածագրին կողմէ, փոխանակ հասկցուելու իրենց լման տարողութեամբ:

6. — Մեր կողմէ կիրարկուած սա վկայութեան մէջ,

«Տալ ըզՀոգին մետասանին,
Եւ քո փոխան լինել նոցին,
Եւ յետ նոցա որք ըստ կարգին»(****),

(*) Հասկ, 1952, էջ 490-491.

(**) Դրախ Յանկալի, էջ 492.

(***) Աւետարան, Աշխ. Թրգմ., Լ. Սրապիոն վրդ. Ուրուհոնեան, Ս. Ղազար, 1952, էջ 618.

(****) Բաճի Զախար, էջ 50.

(*) Մատթ. ԺԲ. 18.

(**) Յովն. Ի. 23.

(***) Ծարականոց, Կ. Պոլիս, 1826, էջ 275.

ըստ Բազմալէպի յօդուածագրին, «ամենին խօսք չկայ վարչական փոխանորդութեան մասին. խօսքը միմիայն այն հրաշագործ զօրութեան մասին է, որ հաւասարապէս տրուեցաւ բոլոր առաքեալներուն» (էջ 25)։ Այս սահմանափակումը չ'արդարանար Բրիստօսի փոխանորդները, այսինքն բոլոր Առաքեալները, ոչ միայն հրաշքներ պիտի գործէին իրենց ստացած Հոգիով, այլ նաեւ պիտի հովուէին իրենց վիճակուած հօտերը. և հովուութեան այդ իրաւունքը ի գործ պիտի դնէին «Եւ յետ նոցա որք ըստ կարգին», ինչպէս կ'ընեն մինչև այսօր ամենայն իրաւամբ։ «Թիւրիմացութիւն մըն ալ հոս», այո՛, բայց ոչ թէ մեր, այլ Բազմալէպի բազմալէպ յօդուածագրին մօտ։

7. — Գեր. յօդուածագիրը կը գրէ, էջ 25-26. «Արդ, շատ բնական է որ, ուր Բրիստօս կը բազմի իբր միակ ու զերագոյն դատաւոր, առաքեալներուն մէջ ա'լ չըլլայ մեծ ու փոքր, այլ հաւասար բազմին Բրիստօսի շուրջ։ Վերջին դատաստանին՝ երկրաւոր զինուորեալ եկեղեցին պիտի դադրի դոյութիւն ունենալէ. այլևս հարկաւոր չէ Պետրոսի զլխաւորութիւնը, քանի որ Բրիստօս անձամբ պիտի զահակալէ իր փառաւորեալ եկեղեցիին մէջ...» — Գեր. յօդուածագիրը այնպէս կը կարծէ թէ վերջին դատաստանէն առաջ հարկ էր որ առաքեալներու մէջ ըլլար մեծ ու փոքր, և հարկաւոր էր որ Պետրոս ունենար զլխաւորութիւն։ Եթէ Բրիստօս ուզած ըլլար որ առաքեալներու մէջ ըլլայ «մեծ ու փոքր», անոնց վէճին առթիւ(*) իբրև մեծ պիտի յայտարարէր Պետրոսը, Բայց Բրիստօս այդպէս չըրաւ, որովհետև ինքն էր և կը մնար յաւիտեան Առաքեալներուն և անոնց յաջորդներուն պետը և գլուխը թէ յաղթական և թէ զինուորեալ եկեղեցիին մէջ(**)։ Հետեաբար Շնորհալիի տողերը,

«Նախ առաքեալքն քո դասին,

Յերկրտասան աթոռ նըստին,

Ձերկրտասան ազգըն դատին

Մեղուցելոյ Իսրայէլին»(***)

ցոյց տալու համար Առաքեալներուն հաւասարութիւնը, շատ պատշաճ կերպով յիշա-

տակուած են և ոչ թէ «անտեղի կերպով» ինչպէս կը կարծէ Հ. Ն. Տէր Ներսէսեան։

8. — Էջ 26. — Գեր. յօդուածագիրը կը գրէ. «Ձեռք կ'ընար բացատրել ինչո՞ւ Գեր. յօդուածագիրը կը ճգնի ոչ միայն անտեսել «Եւ դու Հոսմ մայր քաղաքաց» հատուածին դաւանական պայծառ խմատները, այլ նաեւ մթագնել, բոլորովին այլափոխել դանոնք՝ նորանոր վկայութիւններու անտեղի կուտակումով, և այդպէս պղտորել բարեմիտ հաւատացեալներու միտքերը»։ — Մեր ծանօթ յօդուածը ուղիղ չէ հասկցուած Գեր. յօդուածագրին կողմէ հակառակ այնքան պայծառ ըլլալուն։ Ան կը կարծէ որ մեր յօդուածը կը պղտորէ «բարեմիտ հաւատացեալներու միտքերը». այդ մասին թողան հոգ ըլլայ. հայ «բարեմիտ հաւատացեալները» դարերէ ի վեր յստակ միտքով երգած են

«Նոյն շինեցեր զեկեղեցի

Վէճիկ ի վերայ վիմին քանին»,

և կը շարունակեն երգել, զիտնալով որ այդ տողերուն մէջ ծրարուած են «դաւանական պայծառ խմատները», հաստատուած և վաւերացուած եկեղեցւոյ բարձր հեղինակութեամբ։ Պետրոսեան դաւանութեան տեղ Պետրոսի անձը չէ կարելի եկեղեցւոյ հիմ զնել Շնորհալիի բառերով։

9. — Էջ 26. — Հ. Ն. Տէր Ներսէսեան կը գրէ. «Ս. Ներսէս Շնորհալի ոչ միայն «Եղեհիոյ Ողբ»-ին մէջ, այլ նաեւ այլուր Ս. Պետրոս Առաքեալը կը կոչէ առակերաց զերազոյն, ընտել զլուս փոքիկ հօտին, իսկ առաքեալները կ'անուանէ Պետրոսեան զուկոս։ Եւ ապա ոյժ տալով իր երեսկայութեան կ'աւելցնէ. «Աւրեմ, ըստ Շնորհալիին, Պետրոս Առաքեալ զօրավարի մը հանգամանքն ունի, կառավարիչ մըն է», և այլն։ — Կանխաւ բացատրուած է որ Պետրոսի զլխաւորութիւնը կը կայանայ իր հաւասարակիցներու կարգին առաջնութեան մէջ, Առաքեալ մըն է այն ալ միւսներուն նման, և անոնց վրայ ոչ մէկ իշխանութիւն կամ իրաւասութիւն ունի։ Ինչպէս է որ Գեր. յօդուածագրին փնտռած և իր կանխակալ կարծիքները զգուշ խորհրդածութիւններ» տեղ պիտի չունենային մեր «ուսումնասիրութեան անձուկ էջերուն մէջ»։ «Բոլորովին խեղաթիւրուած և ալլասերած» կրնան կոչուիլ այնպիսի գրութիւնները

(*) Տես Մարկ. Թ. 32-33,

(**) Հմմտ. Մատթ. ԻԸ. 20,

(***) Բաճի Զափաւ, էջ 152,

միայն, որոնք հակաեւտարանական վարդապետութիւններ կը պաշտպանեն, կանխակալ կարծիքներու ճշունդէն բռնադատուած:

Չմոռնանք զիտել տալ նաեւ որ օրնաւորեալ զլուսն փոքրիկ հօտին» ուղիղ թարգմանութիւնը չէ «Կլիսոյն ընտրեալ հօտին փոքուն» տողին, վասնզի Շնորհալին օրնաւորեալ» ածականը տուած է «հօտ»ին, մինչ չ. ն. Տէր Ներսէսեան, յայտնի նախանձախնդրութեամբ, նոյն ածականը կը տանի «զլուսն»ին: Մեր ըսածը ստուգելու համար համեմատել քիչ մը վարը «Ի յընտրելոց աշակերտաց» տողը^(*):

10. — Կալով չ. Ներսէս Տէր Ներսէսեանի եզրակացութեան, ինքնին կը տապալի այն, քանի որ այդ շինութեան իբրեւ հիմ դրուած ծուռ մեկնարանութիւնները հերքուեցան մի առ մի: Ըստ Ներսէս Շնորհալիի Պետրոս Առաքեալ եկեղեցւոյ «գերագոյն» վարդապետ չի ճանչցուիր. չէ «առաջնորդ, պետ և վարիչ բովանդակ եկեղեցւոյ». չէ «գերագոյն իրաւարար և միահեծան տէր եկեղեցւոյ», վասնզի միայն ինք չունի «արքայութեան բանալիները»: Մեր նախորդ և ներկայ յօդուածները մտադրութեամբ և առանց կանխակալ կարծիքի կարդացողը պիտի տեսնէ որ Ս. Պետրոս Առաքեալ այնքան վարդապետական իշխանութիւն ունի, որքան միւս առաքեալները. առաջնորդ, պետ և վարիչ է բովանդակ եկեղեցւոյ, իր առաքելակիցներուն հաւասար զետնի վրայ. եկեղեցւոյ միահեծան Տէրը Քրիստոս է ինչպէս երկինքի մէջ, այնպէս ալ երկրի վրայ, երէկ և այսօր, նոյն և յաւիտեան:

Ն. ԵՊՄ. ԾՈՒՎԱԿԱՆ

(*) Ժամագիրք, Երուսաղէմ, 1932, էջ 65:



ԿՐԹՆԵ-ԲԵՐՈՅԵԿԵՆ

ԱՍՏՈՒԱԾ

ԵՒ ... ԱՐԴԻ ՄԱՐԴԸ

Մեքենապաշտութիւնը կրկին չափով մարդարանական ըլլալ կը նշանակէ. քանի որ մեքենան յառաջ եկած է արուեստական արապրութեամբ, հնարուելով և շինուելով մարդոց կողմէ իրենց կարիքներուն համար: Այն խանդավառութիւնը որ ստեղծուած էր ճարտարարուեստի յեղափոխութեամբ և կ'որակուէր նիւթապաշտութիւն, մեր օրերուն, ժողովրդական բացատրութեամբ մը կը կոչուի կեանքի-ուժ: Բայց տիեզերքի Արարչին կեանքի-Ուժ անուամբ որակել կը նշանակէ Անոր մասին կենսաբանօրէն մտածել, ինչ որ դարձեալ մարդարանական է: Եթէ պիտի չկարենանք ձերբազատուիլ այսպիսի եղբեր գործածելէ, ինչո՞ւ մաշած տարագնեւոր գործածելով տաղնապինք: Արդարեւ, ըլլալով մարդկային էակներ, հարկադրուած ենք մարդկօրէն խօսիլ նոյնիսկ գերմարդկային շուրջ: Որեւէ մտածում կը յառաջագայի մտածողին փորձառութենէն, կամ այն փորձառութիւններէն որոնք անցեալին մէջ ձեռք ձգուած են ուրիշներէ: Մարդկային չեղող մտածումներ, յղացքներ գտնելու փորձն ու փրնալու տուտութիւն, իր սեփական մօրթէն դուրս գալու ճիշդ մըն է: Միանգամ ընդմիշտ հաստատած ըլլալու համար կրկնենք. — Չենք կրնար մեր իմացականութեան պարունակէն դուրս գտնուող չափեր գործածել:

Աստուծոյ մասին մեր գիտութիւնը կը ստանանք այն կատարելութիւններէն որոնք կը բղխին Արարիչէն արարածներու: Կատարելութիւնները — հարկ չկայ ըսելու — անհունօրէն աւելի են Աստուծոյ մէջ քան ստեղծուած ոեւէ էակի մէջ: Արդ՝ մեր իմացականութիւնը, կատարելութիւններ և առաքինութիւններ կ'ըմբռնէ այնպէս՝ ինչպէս որ ատոնք կան արարածներու մէջ, իւրաքանչիւրը զատորոշելով և առանձինն անուանելով: Հետեւաբար, Աստուծոյ տըր-

ուսած անուններուն մէջ երկու նկատառման արժանի կէտեր կան.

Ա) Անուններ որոնք կատարելութիւններ կը ցուցնեն, օր. բարութիւն, զթութիւն, հայրն:

Բ) Եղանակը, որմով ցոյց կուտան, ինչ որ այս անունները ցոյց կուտան, մարդոց պատկանելէ առաջ Աստուծոյ կը վերաբերին: Բայց արտայայտութեամբ, տարածութեամբ, չեն սահմանափակուիր Աստուծոյ մէջ, վասնզի ատոնք արարածներու մէջ ևս գոյութիւն ունին:

Արդի մարդուն Աստուծոյ վերազարած նկարագիրները նոյնն են տիեզերքին ալ տրուած նկարագիրներուն, որոնց վրայ ձևուած են Անոր գոյութեան փաստերը: Ծարժում, պատահականութիւն, պատճառականութիւն, բաղադրութիւն (composition), ներդաշնակութիւն: Ինչպէս որ աշխարհը փոփոխական, անկատար և բարդ ըլլալով պատճառականութեան մը արդիւնք կը սեպուի, նոյնպէս և արդի Աստուծոյ նոյն օրէնքով պատճառ մը կը պահանջէ: Արդի Աստուծոյ ... Աստուծոյ մը կը պահանջէ: Եթէ զոհ չենք պատահական և անկատար տիեզերքի մը գաղափարով, զոհ չենք կրնար ըլլալ նաև եղափոխուող Աստուծոյ մը գաղափարէն: Եղափոխութեան այս իրողութիւնը մեզ կը մղէ մտածելու գերազանց ճարձի Զօրութեան մը, նախապատճառի մը, կատարեալ էութեան մը, գերազոյն իմացականութեան մը, որ ամէն բան կը դասաւորէ տիեզերքին մէջ և կը հասցնէ ներդաշնակութեան:

Նախապատճառը չի կրնար ինքզինքին ալ պատճառ եղած ըլլալ, վասնզի, պատճառ հանդիսանալու համար պէտք է ի սկզբանէ գոյութիւն առած ըլլայ: Աստուծոյ չէ ըստեղծուած, բայց էութիւնն իսկ է: Կատարեալն Աստուծոյ չի կրնար մաս առած ըլլալ գոյացութեան մէջ, որովհետեւ էութեամբ գոյացութիւն է: Գերազոյն իմացականութիւնը որմով ամէն ինչ գոյ է, չի կրնար գոյութեան կանչուած ըլլալ: Եթէ տիեզերքը կ'եղափոխուի, Աստուծոյ սակայն անփոփոխ է: Եթէ տիեզերքը անկատար և բաղադրեալ է, Աստուծոյ գերազանցօրէն կատարեալ է, ինչպէս կը կարգաւք արդէն «Ես եմ որ էն» (Ելից Գ. 14):

Աստուծոյ գոյացութեան և էութեան

հարցը բնագոյացութեան ամենէն մեծ և կարեւոր խնդիրն է, ասոր համար է որ շատ մը անուններ և վերագրումներ ըրած են մարդիկ: Ամենէն մեծ հարցը որուն կը ճգնի պատասխանել բնագոյացութիւնը անստեղծ, անփոփոխ, անսահման, բացարձակօրէն կատարեալ Աստուծոյ խնդիրն է: Աստուծոյ, ինչպէս ըսինք, գոյացութիւն չէ ունեցած, Անիկա պարզապէս է: Ոչ ինքզինքին գոյացութիւն կուտայ ոչ ալ ուրիշէ մը կ'առնէ: Իր բնութիւնը ըլլալ է: Բայց աւանդական հարցումը. — Աստուծոյ գոյութիւնը պատճառ մը չէ՞նթաղեր: Աշխարհը պատճառի մը արդիւնքը չէ՞: Վեհ պարզութեան մը մէջ Ծննդոց Գրքին սկիզբը կը բացուի այսպէս. «Ի սկզբանէ արար Աստուծոյ գերկինս և գերկիրն: Այսպիսի բացատրութիւն մը պատճառականութեան ծարաւ միտքերուն զոհացում մը կուտայ ու ասկէ անդին անհրաժեշտ չէ մանուկին հարցումը կրկնել որ տեսապէս հօրը կ'ըսէ. — «Վ ստեղծեց Աստուծոյ: Արդարեւ ըսուած է թէ Աստուծոյ ծագման, էութեան, ստեղծումին մասին հարց ուղղել, մտաւորական անպարկեշտութիւն և իմացական ժպիրհութիւն է:

Թէ ինչո՞ւ տիեզերքը պատճառ մը ունի և Աստուծոյ սկիզբ մը և պատճառ մը չունի: Առաջին հարցումը օրինաւոր է, բայց երկրորդը անհեթեթ: Միւս կողմէ սխալ է երկու հարցումները իրար հետ շփոթել և մտածել թէ ինչու գոյութիւն կայ: Եթէ Աստուծոյ էութիւնը սահմանաւոր երևոյթներու կարգին դասենք, համաստեղծութիւն ըրած պիտի ըլլանք: Օրինաւոր է հարցնել թէ ինչո՞ւ սահմանաւոր բան մը, առարկայ մը, իր մը գոյութիւն ունի, վասնզի սահմանաւոր իրի մը էութիւնը իր գոյացութիւնը չէ: Անոր էութիւնը գոյութիւն ունենալ չէ: Բայց քանի որ Աստուծոյ մէջ էութիւնը և գոյացութիւնը նոյնն են, անհեթեթ է հարցնել թէ իր գոյացութիւնը ուսկից յառաջ եկած է: Նախապատճառին համար պատճառ մը փնտռել պարզապէս կը նշանակէ պահանջել որ այն որ առաջինն է նոյն ատեն ըլլայ նաև երկրորդը: Ամէն բանի գոյութեան պատճառ եղող Աստուծոյ համար պատճառ մը փնտռել կը նշանակէ ուրանալ Անոր նախապատճառ մը ըլլալու հանգամանքը, քանի որ Ան ալ իր

կարգին ազդեցություն մը կրած է և արդիւնք է:

Ամէն տեսութիւն որ մեր գոյութեան բացատրութիւնը գերազոյն էութեան մէջ կը գտնէ, գծուարութեան մը առջեւ կը դնէ ինքզինքը. թէ ինչպէս պատահական գոյացութիւնը յառաջ կուգայ անհրաժեշտ գոյութենէն. ինչպէս սահմանաւորը յառաջ կուգայ անսահմանէն. ինչպէս անկատարը ամենակատարեալէն կը յառաջագայի: Տիեզերքը փոփոխութեամբ զրոյնում է: Համաստեղածութիւնը վերջի վերջոյ կը ստիպուի ընդունիլ թէ փոփոխութիւնները որոնք մեր աշխարհը կը յատկանշեն, տեղի կ'ունենան նոյնինքն անհրաժեշտ գոյացութեան մէջ: Թէ ինչ որ փոփոխական է և հետեւաբար պատահական, կարեւոր տարր մըն է անհրաժեշտ էութեան մէջ: Ինչպէս կ'երևի, այս պարագան բացայայտ հակասում մըն է:

Մեր բանականութիւնը առանց ընդվզ-զուովի չի կրնար կողմնակից ըլլալ համաստեղածեան տեսութեան որ այս հարցը լուծել կ'աշխատի: Աստուած անսահման և կատարեալ ըլլալով, գոյութիւն կուտայ իրմէ տարբեր ուրիշ էակներու որոնք այնքան ատեն որ իրենց գոյութեան պատճառը չեն, սահմանուած են պատահական և հետեւաբար անհաստատ ըլլալով:

Արդի մարդը կ'ընդունի թէ Աստուած աշխարհի մէջ է և կը գործէ կազմաւորապէս (organiquement): Այս հաւատաւոր միտքով մէկ փոփոխակն է այն հաւատալիքին թէ Աստուած ամէն տեղ է. Երկու ձևով Աստուած բնականոր կրնայ ըլլալ աշխարհի մէջ:

Ա) Գոյապէս (substantiellement), այսինքն Աստուածային գոյութիւնը կրնայ մէկ ըլլալ տիեզերքին հետ այն ձևով որ sodium-ը ու chlorine-ը քիմիական աղին բաղադրիչներն են:

Բ) Աստուած կրնայ բնականոր ըլլալ տիեզերքին մէջ պատճառականապէս: տեղածագործութեան արարքին շնորհիւ, որուն միջոցաւ Ան տիեզերքը գոյութեան բերաւ, ու յաւիտենապէս կը շարունակէ մնալ միշտ ներկայ պատճառը բոլոր տիեզերական գոյութեան և գործունէութեան: Այս երկրորդ տեսակէտը ճշմարիտն է: Աստուած աւելի է քան պատճառ մը որմով գոյութեան կոչուած է տիեզերքը: Երբ որ արա-

ԳՐԱԽՕՍԵԿԱՆ

ՀԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ

Երեւան, 1952

Մեծածաւալ հատոր մը, չքեղ և դուռնաւոր տպագրութեամբ, լոյս ընծայուած Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութեան կողմէ. 3000 օրինակ, գին 200 ռուբլի:

Այս պատուական երկին աշխատաւորները եղած են արուեստի վաստակաւոր գործիչ Լ. Ա. Գուրնովոյ, որ կատարած է մանրանկարներու ընտրութիւնը, և գրած է «Հին Հայաստանի Գրքային Գեղանկարչութիւնը» ներածական ակնարկը և նկարներու բացատրութիւնները: Պատմական գիտութիւններու թեկնածու Բ. Ն. Առաքելեան և արուեստի վաստակաւոր գործիչ Ռ. Գ. Դրամբեան խմբագրած են զայն և գրած Առաջաբանը: Հայկական Ս. Ս. Ռ. Ժողովրդական նկարիչ Մ. Ս. Սարեան կա-

րածներ գոյութեան կուգան, անոնք օժտուած չեն ըլլար գոյութեան այնպիսի ձևով մը որ կարենան տեսլ անկախ Աստուածային պատճառականութենէն: Աստուած կը պահէ զանոնք գոյութեան մէջ շարունակաբար: Աստուածային պաշտպանութենէն և նախախնամութենէն դուրս ոեւէ արարած անհրաժեշտաբար կ'իյնայ ետ՝ ունչութեան մէջ: Ամէն ինչ որ ստեղծուած է, իր գոյութեան շարունակութեան համար Աստուծմէ կախեալ է:

Ուղղափառօրէն կը հաւատանք թէ Աստուած ամենուրեք ներկայ և ամէն բանի մէջ է. ոչ թէ իրերու մէջ գոյութիւն ունի իբրեւ անոնց էութեան մէկ մասը, ոչ ալ պատահաբար, այլ՝ այնպէս ինչպէս գործիչ մը ներկայ է գործի մը վրայ որուն համար կ'աշխատի: Գործիչ մը կը միանայ գործին հետ որուն վրայ կ'աշխատի. ուստի Արարիչն ու արարածը պէտք է միացած ըլլան...

HUBERT S. B.

տարած է գեղարուեստական խմբագրութիւնը, և նկարիչ Կ. Թ. Տիրատուրեան՝ ձեռնարկումը: Սոյն հատորը հրատարակուած է ըստ Հայկական ՍՍՍՀ պետական պատկերասրահի նիւթերուն:

Առաջարանը կը գրաւէ երկու էջ, ուր կը խօսուի հայ ժողովուրդի մշակութային ժառանգութեան մէջ առաջին տեղերէն մէկը գրաւող գրքային գեղանկարչութեան մասին: Ձեռք մը տեղ, ոչ ճարտարապետական յուշարձանների առատ ու բարձրարուեստ գեղորատիւ քանդակների մէջ, ոչ կիրառական արուեստների որեւէ այլ ճիւղում ժողովրդի ամենահարուստ երեւակայութիւնն ու հնարամտութիւնը զարգարուեստի նրա սուր զգացողութիւնն ու նուրբ ճաշակը իրենց կիրառութիւնը չեն գտել այնպէս առատ ու ճոխ, ինչպէս հայկական զրչագրի մատենաների էջերում, կը յայտարարեն Առաջարանի խմբագիրները իրաւամբ:

Հին Հայաստանի Գրքային Գեղանկարչութիւնը ներածական ակնարկը կը գրաւէ ութ էջեր, իսկ անոր յաջորդող վեց էջերով տրուած են նկարներու բացատրութիւնները: Լ. Ա. Դուրնովոյի այս երկու գրութիւնները, Առաջարանին իսկ բառերով, Քասես հանրագումարն են հանդիսանում այն աշխատանքի որ հեղինակը մի շարք տարիների ընթացքում կատարում է հայկական մանրանկարների և զարդանկարների ուսումնասիրութեան ուղղութեամբ: Ակնարկում համառոտակի բնութագրուած են հայկական մանրանկարչութիւնն ու զարդարուեստը և նրա առանձնայատկութիւնները, նշուած են նրա մի քանի հիմնական գեղարուեստական ուղղութիւններն ու պրոցները, քննարկուած են գեղարուեստական ձեռագրերի առաւել աչքի ընկնող օրինակները:

Լ. Ա. Դուրնովոն իր արժէքաւոր ակնարկը կը վերջացնէ սա արդար տողերով. «Այդ իրենց գործին նուիրուած ու աշխատասէր նկարիչ-ձաղկողները հետագայ սերունդներին թողել են մի խոշոր ժառանգութիւն: Հայ ժողովուրդը զարմանալի սիրով ու խնամքով է պահել բազում հարկաւանակների ընթացքում իր ստեղծագործական տաղանդով կերտուած կուլտուրայի ու արուեստի յուշարձանները՝ ձեռա-

գրերը և այդ նշանաւոր ժառանգութիւնը հասցրել է մինչև մեր օրերը»:

Առաջարանի, ներածական Ակնարկի և նկարներու բացատրութեան սուսերէն թարգմանութիւնները կը գրաւեն տասնուեւոթ էջեր:

Ապա կու գան դուռնաւոր մանրանկարներ և զարդանկարներ 60 էջերու վրայ, հանուած ժ-ժէ զարերու հայկական ձեռագիրներէ: Առաջարանէն կը տեղեկանանք որ «Լ. Ա. Դուրնովոյի գեղավարութեամբ մի խումբ աշխատակիցներ, սկսած 1936 թ., պատճենահանում են կատարում հայկական մանրանկարների ձեռագրերից: Հանուած պատճենների մի մասը վերաբաղւորուած է ներկայ հրատարակութեան մէջ»:

Պատճենահանման աշխատանքին մասնակցած են 15 հոգի, որոնց մէջ յաջողագոյններն են, մեր կարծիքով, Լ. Ա. Դուրնովոյ՝ 9 նկար, Ե. Գ. Խաչատրեան 11, Ա. Ա. Ղարիբջանեան 2, Գ. Ն. Թանաղեան 7: Մենք առիթը ունեցանք տեսնելու Հայկական Ս. Հանրապետութեան պետական պատկերասրահին մէջ շարք մը պատճեններ և անոնց սկզբնատիպերը, և չվարանցանք հաստատելու որ ապակեփեղկերու մէջ ցուցադրութեան դրուած պատճենները յարեման էին իսկական մանրանկարներուն:

Այս հատորին պատրաստութեան համար օգտագործուած են 28 ձեռագրեր, որոնցմէ 23ը Աւետարան, իսկ միւս հինգը՝ Ծառնտիր, Ծառոց, Մեկն. Սաղմոսաց, Ծարական, և Պատմութիւն Աղեքսանդրի: Սոյն 28 ձեռագրերը եօթը զարերու վրայ կը բաշխուին այսպէս.

Ժ Գար	1	Ձեռ.	3 նկար
ԺԱ »	2	»	7 »
ԺԲ »	2	»	4 »
ԺԳ »	9	»	25 »
ԺԴ »	8	»	12 »
ԺԵ »	4	»	6 »
ԺԶ »	2	»	3 »

Այս ցուցակին մէջ նկատելի են յատկապէս երկու հանգամանքներ. մին՝ ԺԴ զարու ճոխութիւնը, և միւսը ԺԶ զարու չքաւորութիւնը: Արդարեւ ԺԴ զարը կարելի է կոչել հայ մանրանկարչութեան ոսկեգործ գլխաւորաբար կիրկիրոյ մէջ:

Նկատի ունենալով մանրանկարներով և

զարգանկարներով շքեղացած հայերէն ձեռագիրներու բազմութիւնը, անշուշտ չեն չին տակոս մըն է քաանութիւնը. և ներկայ հատորը փոքրիկ զազափար մը միայն կու տայ Պետական Մատենադարանի մէջ համահաւաքուած մեր ազգային հարուստ ժառանգութեան մասին: Ասոր նման քանի մը տասնեակ հատորներ անհրաժեշտ են հայ մանրանկարչութեան իսկական տարողութեան մասին ճշգրիտ զազափար մը կազմելու համար: Այսուհանդերձ սոյն հատորը իր ճոխութեամբ կը գերազանցէ ցարդ աստ և անդ հրատարակուած հայ մանրանկարչութեան գունաւոր վերաբաղման թիւները:

* * *

Հայ մանրանկարչութեան պատմութեան մէջ ընդհանուր կերպով ընդունուած է այժմ որ Թորոս Ռաւսլին բարձրագոյն տաղանդով օժտուած և բազմադիւն արուեստագէտ մըն է. ուստի արժան կը համարինք առանձին գրադիլ այս հատորին մէջ իրեն պատկանող կամ վերադրուող նկարներով, որոնք մօտաւորապէս մէկ չորրորդը կը կազմեն ամբողջին և կը զրաւեն 26-39 թիւերը:

Թ. 26 նկարը առնուած է թ. 3033 Աւետարանէն, որ կը կրէ 1251 թուականը և նկարազարդուած է Հռոմկլայի մէջ, ըստ Լ. Ա. Դուրնովոյի՝ Վարդանի ձեռքով: Այս նկարը առաջին ակնարկով կը յիշեցնէ Ռօսլինը, որ իր միւս յայտնի Աւետարաններուն մէջ ունի նման էջեր և ստանաւոր մաղթանքներ (Հմտ. Սիւրմէեան, Յուցակ Զեռ. Հատոր, էջ 138. Պողարեան, Յուցակ Զեռ. Երուսաղէմի, Դ. Հատոր, էջ 15. Ընդ մամուլ): Այս օրինակին մէջ կը յիշուի Վարդան իրրեւ պճնող բանիս, մինչդեռ միւսներուն մէջ կը տեսնուի կոտանդին՝ որ ձեռագրի պատուիրատուն, և նկարազարդման ծախքերը հոգացողն է. այստեղ ալ արդեօք Վարդանը զրքին մեկենասը չէ՞ պարգապէս: Եթէ միայն այս յիշատակութենէն հետեւցուելով նկարիչը համարուած է Վարդան, ըստ մեզի կը մնայ յոյժ կեղակարծ: Տպուած պատճէնը յիշուի չի ներկայանար այնպիսի նրբութեամբ, ինչ որ յատկանիչն է Ռօսլինի վրձինին, բայց նրբութեան այդ պա-

կասը չափով մը կրնայ բացատրուիլ նաեւ անով որ այս ձեռագրին թուականը հինգ տարեով կը կանխէ իր տնունով ծանօթ հնագոյն Աւետարանը, որ կը կրէ 1256 թուականը: Հետեւաբար մենք աւելի հակամէտ ենք թ. 26 նկարը Ռօսլինի գործ համարելու:

Թ. 27, 28, 29 նկարները առնուած են թ. 7644 ձեռագրէն, որ Աւետարան մըն է Կիւիկիոյ մէջ նկարազարդուած Սմբատ Գունդըստապլի պատուէրով: Այս նկարները հաւանաբար կը պատկանին Թ. Ռօսլինի ժամանակակից և մեծ տաղանդ ուրիշ արուեստագէտի մը, որուն անունը կը մնայ անյայտ: Մեր կարծիքով ճիշդ չէ վերագրել այս նկարները Թ. Ռօսլինին, մէկէ աւելի պատճառներով: Հաւանաբար նոյն այս արուեստագէտին կը պատկանի Վասակ Արքայեղբոր թանկագին Աւետարանը, որ մաս կը կազմէ Ս. Թակոբեանց հաւաքման, և որուն նկարչին վերաբերմամբ Մեհրոպեպո. Տէր Մովսէսեան գրած է. «Մեկ համար դեռ ևս անծանօթ հայ մանրանկարչական արուեստի ամենափայլուն ներկայացուցիչն է» (Ազգագրական Հանդէս, 1910 թ. 2, էջ 31):

Թ. 30-31 նկարները առնուած են թ. 9422 Աւետարանէն, որ նկարազարդուած է Կիւիկիոյ մէջ: Այս ալ վերագրուած է Թ. Ռօսլինին: Այս նկարչին երանգապնակը կը տարբերի նախորդիւնէն. սա աւելի նմանութիւններ ունի Ռօսլինի ճաշակին և ոճին հետ: Լ. Ա. Դուրնովոն այս նկարներու բացատրութեան առթիւ ի միջի աչոյց սա բնորոշիչ տողերը կը գրէ Ռօսլինի մասին. «Թորոս Ռօսլինը նկարազարդել է մի քանի գիրք՝ յանուանէ ստորագրուած, և մի քանիսն էլ անստորագիր են, բայց անշուշտ պատկանում են նրա վրձինին: Բացառիկ տաղանդի տէր, լայն և բազմակողմանիօրէն կրթուած, հաւանաբար շատ ճանապարհորդած, խոհուն և աշխատօրէն տոգորուած, զեղեցկութեան ու զեղարուեստական տակաւին ուերը զգացում ունեցող այդ նկարիչը աչքի է ընկել նոյնպէս օրնամենալ մոտիւներին և նրանց յօրինուած քերթի անըստապատեղծագործական երեւակայութեամբ ու հնարամտութեամբ, և փայլուն կերպով տիրապետելով տեխնիկային, աշխատել է շատ հիւսիկ և զեղարուեստօրէն»:

Թ. 32 առնուած է թ. 197 Աւետարանէն, գրուած 1287ին, և կը վերագրուի Թ. Ռօսլինին: Արդարեւ այս նկարը որոշակի կը ցուցնէ Ռօսլինի արուեստը: Լ. Ա. Դուրնովոյի բացատրութեան մէջ կը հանդիպինք հետեւեալ քննարկող տողերուն. Թ. Ռօսլինը, մարդային գէմքերը պատկերելու ժամանակ, գամենեւին չի գեղեցկացնում, չի իղէալականացնում և, նկարելով Քրիստոսին և միւս սրբերին, տալիս է նրանց գէմքերին սովորական, ոճաւ, ամէն օր իրեն շրջապատող մարդկանց գէմքերի արտայայտութիւնները:

Թ. 33-39 նկարները առնուած են թ. 979 ձեռագրէն որ Հեթում Բ. թագաւորին համար պատրաստուած ծառց գիրքն է: Նկարազարդումը կը վերագրուի Թ. Ռօսլինին: Թուականն է 1288: Այս պատուական ձեռագրին նկարազարդումը Թ. Ռօսլինին վերագրելու զօրաւոր հիմեր կը պակսին մեր կարծիքով, և այս մասին կը մնանք վերապահ: Համեմատել այս առթիւ ինչ որ ըսինք քիչ մը վերը թ. 27-29 նկարներու նկատմամբ: Այս ձեռագրի նկարազարդման մէկէ աւելի վարպետներ կրնան աշխատած ըլլալ: Այսուհանդերձ օգտակար կը սեպենք արտադրել հետեւեալ ուշագրաւ տողերն ալ Լ. Ա. Դուրնովոյի գրչէն.

«1288 թուականի ձեռագիրը թէև Թորոս Ռօսլինի ստորագրութիւնը չի կրում, բայց բոլոր տուեալներով պատկանում է այդ հուշակաւոր վարպետի վրձինին: Զեռագրի բազմաթիւ մանրանկարներն և զարդանկարներն մէջ երեւան է գալիս նկարչի բացառիկ տաղանդը և կուլտուրան: Նրա բազմակողմանի ստեղծագործութեան համար քննարկ է մի նոր վերաբերմունք գէպի մարդն իր բոլոր գրեւորութիւններով հանդերձ, գէպի շրջապատող իրականութիւնը, գէպի մարդուն ներքին կեանքը և գէպի, թէկուզ պայմանական ձեւերի մէջ, քաղաքական և հասարակական կեանքի բազմաթիւ երեւոյթների ներքին բովանդակութեան բացայայտումը: Աւեննալով գեղարուեստական գիտելիքների և նրբազգացութեան, կերպարների ու պատկերացումների և տեխնիկական կատարեալ ունակութիւնների հարուստ պաշար, նա շուրջընդէր սեւորում է ինք իրեն՝ երբեք չկրկնուելով ոչ մի յօրինուածքում, ոչ մի ժեստում

կամ գէմքի արտայայտութեան մէջ, ոչ մի օրնամենտալ մոտիվում: Լինելով դաւակիր դարի, որն ամենուրեք վերականգնում էր աշխարհայեցողութիւնը, զապաւարախօսութիւնը, պետութիւնը, կուլտուրան, հասարակական և մասնաւոր կեանքը, նա ընթանում է այդ շարժման աւանգարդում և, որպէս խոշոր նկարիչ, առաջինը ինքն է առաջ քաշում և մասամբ լուծում այն պրոբլեմները, որոնք հետագայում վերածնութիւնն է մշակել: Ծարժուկների իսկական և ոչ պայմանական կենսականութիւնը, յուզականութիւնը, անատոմիան, գծային և օդային հեռանկարները, պատմականութիւնը — բոլոր այս հարցերը շօշափուած են նրա կողմից: Մի քանի, յատկապէս մարդկային անձնաւորութեանը վերաբերող հարցերի լուծման մէջ նա վստահօրէն առաջ է գնացել ճիշտ ուղիով:

* * *

Աւենելով այս հատորը իր ամբողջութեան մէջ, պէտք է ըսենք որ շատ արժէքաւոր յաւելում մըն է հայկական մանրանկարչութեան վերաբերող հրատարակութեանց և ուսումնասիրութեանց շարքին վրայ: Ծանկալի է որ նման հրատարակութիւնների շարունակուն Հայկական Ս Ս Ս Պետական Հրատարակչութեան կողմէ, որպէսզի մեր նախնի մեծ արուեստագէտներու ստեղծագործութիւնները սեփականութիւնը դառնան ոչ միայն հայ գանգուածներուն, այլ և օտար գիտնականներու և արուեստագէտներու, և այդպիսով անունը և ներշնչում մատակարարեն նորանոր ստեղծագործութիւններու: Հայկական մանրանկարչութիւնը կը կազմէ մեր ազգային պարծանքներէն մէկը, և որքան շատ և շուտ տարածուի ան, այնքան աւելի պիտի նպաստէ մեր մէջ ազդող ազգային հպարտութեան օգի մը կերտելու և առով մեզ վեր բռնելու օտար մշակոյթներու կշանող հոսանքներուն դէմ, որոնք անխնայ կը խուժեն ի Սփիւռոս աշխարհի ցրուած հայութեան դժբախտ բեկորներուն վրայ:

Ն. ԵՊՍ. ՄՈՒԼԱԿԱՆ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Կ Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● Կիր. 7 փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասրիսեան:

● Կիր. 14 փետր. — Բարեկենդան Առաջաւորի պահօց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութիւն, Բ. Գողգոթայի վերնամատարան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Կիրեղ Արդ. Գարիկեան:

● Ուր. 19 փետր. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան նախատօնը պաշտուեցան Ս. Յակոբ: Հանդիսագետն էր Գեր. Տ. Նորայր Եզս. Պողարեան:

● Շր. 20 փետր. — Ս. Սարգսի գորավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Սուրբ Սարգսի Նաղարեան մատարան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Զաւէն Արեղայ Զինչիւնեան: «Տէր ու զորմեանէն առաջ, Գեր. Տ. Սուրէն Եզս. Քէմ. հանձնաւ խօսեցաւ քարոզ մը պանծացնելով Կիւլպէնկեան զերգաստանի բարեխիշատակ նշնեցաւ. ներսն ու երկար կեանք մաղթեց կենդանի պարագաներուն, իսկ Ս. Պատարագէն ետք նախագահեց Ս. Աթոռոյ մեծ քարերար Վսեմ. Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի ծնողաց, Սարգսի և Տիրուհոյ հոգիներուն ի հանդիստ կատարուած տարեկան հոգեհանգստեան պաշտամունքին:

● Կիր. 21 փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Լըբեշտակապետ, Ժամարարն էր Հոգ. Տ. Վարուժան Արդ. Գապարահեան:

● Ուր. 26 փետր. — Տեսաւ ընդառաջի նախատեսակը մեծ վայելուչ հանդիսաւորութեամբ պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, ապա կատարուեցաւ «Անգոստան»: Արարողութեանց կը նախագահէր Գեր. Տեղապահ Ս. Հայրը:

— Իրիկեանդէմին, Մայր Տաճարին մէջ կատարուեցան «Եկեցե՛ք»-ի և «Հովան» խորհրդաւոր արարողութիւնները՝ նախագահութեամբ Գեր. Տ. Նորայր Եզս. Պողարեանի:

● Շր. 27 փետր. — Տեսաւ ընդառաջ: Առաւօտեան ժամերգութեանէն ետք, Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ. Ժամարարն էր Գեր. Տ. Նորայր Եզս. Պողարեան, որ քարոզեց, բնարան ունենալով «Ես լոյս աշխարհի եկի» (Յովհ. ԺԲ. 46): Մարդկութիւնը միշտ պէտք ունի այդ լոյսին: անսայթաք ընթանալու համար կեանքի փշաւից հանապարհէն ու հասնելու յաւիտեանական կեանքին: Զարեհը կը մերժեն այդ լոյսը, ու կը յամենան խաւարին մէջ, վստի երբ գան լոյսին: պիտի յայտնուին իրենց շար արարքները: մինչ բարիները լոյսէն զաւտելու պատճառ մը չունին: Այդպիսիներն են որ, խմստուն կոյսերուն նման, պիտի արժանանան մասնակից ըլլալու երկնաւոր փեսային հարսանիքին: Այն տունը որ այդ լոյսէն զուրկ կը մնայ, հոն անպակաս կ'ըլլան վէճեր ու խռովութիւններ ու զանազան մօլութիւններ:

● Կիր. 28 փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութիւն, Բ. Գողգոթայի վերնամատարան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Դեղդ Արեղայ Նաղարեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Դշ. 2 փետր. — Կէսօրէ վերջ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը վանական զործերով մեկնեցաւ Խորայէլ և վերադարձաւ Ուր. 5 փետր. Կ. Վ.:

— Կէսօրէ վերջ, Անթիլիասէն հիւրարար քաղաքս գտնուող Գեր. Տ. Գնէլ Ծ. Վրդ. ձէրէճեան և Հոգ. Տ. Սահակ Արդ. Այվազեան վերադարձան Անթիլիաս:

● Շր. 6 փետր. — Կ. ա. ժամը 11:30-ին, Քաղաքիս Բրիտանական Նոր Ընդհ. Հիւպատոսը, Mr. T. Wikeley, առաջին անգամ ըլլալով այցելեց Գեր. Տեղապահ Ս. Հօր:

● Դշ. 9 փետր. — Կ. ա. ժամը 11-ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասրիսեանի և Տիար Կ. Հինդլեանի, փոխ-այցելութիւն տուաւ Mr. T. Wikeley-ին, Բրիտանական Հիւպատոսարանին մէջ:

— Իրիկեան ժամը 6-ին, փարիզի Քաղաքապետ Monsieur Frédéric Dupont-ի երեսօղէմ այցելութեան առթիւ, Յրանաական Ընդհ. Հիւպատոսարանին մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գեր. Տ. Սուրէն Եզս. Քէմ. հանձնաւ, Հոգ. Տ. Զաւէն Արեղայ Զինչիւնեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Դշ. 10 փետր. — Կ. ա. ժամը 11-ին, Քաղաքիս Նորընտիր Délégué Apostolique (Պապական Նուիրակ) Mons. Silvio Oddi, իր առաջին այցելութիւնը տուաւ Պատրիարքարանին:

— Կ. Վ. ժամը 3:30-ին, Palestine Archaeological Museum-ի սրահին մէջ, Miss Dorothy Garrod-ի D. Sc., F. B. A. կողմէ «The fossil men of Mount Carmel» նիւթին շուրջ տրուած բանախօսութեան ներկայ գտնուեցաւ Հոգ. Տ. Զաւէն Արդ. Զինչիւնեան:

● Բշ. 15 փետր. — Կ. ա. ժամը 11-ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Հայրերու, փոխադարձեց Պապական Նուիրակին այցելութիւնը Լատինաց Պատրիարքարանին մէջ:

● Եշ. 18 փետր. — Կ. ա. ժամը 11-ին, Պէյրութի UNRWA-ի բարձրատիճան պաշտօնեաներէն Mr. Constantine Vlachopoulos այցելեց Պատրիարքարան:

● Դշ. 23 փետր. — Կէսօրէն ետք, Գեր. Տեղապահ Ս. Հայրը վանական զործերով մեկնեցաւ Խորայէլ և վերադարձաւ Եշ. 25 փետր. Կ. Վ.:

● Կիր. 28 փետր. — Առաւօտուն, Հոգ. Տ. Կիրեղ Արդ. Գարիկեան մեկնեցաւ Նոր Երուսաղէմ պատարագելու և հոգեւորապէս միութարեւելու համար տեղւոյն փոքրածիւր գաղութը և վերադարձաւ Երկուշաբթի կէսօրէ վերջ:

ՄԻԱԲԱՆ ՆԵՐՍԷՍ ՆԵՎՐՈՒԶԵԱՆ

Յաւով կ'արձանագրենք մահը Ս. Աթոռոյ տարեց միաբաններէն Ներսէս Նեւրուզեանի, որ տեղի ունեցաւ Դշ. 9 Փետրուարի գիշերը:

Հանգուցեալը ծնած է Էփրէզ 1871ին, 1896ին մտած է Ս. Աթոռոյ ծառայութեան մէջ իբրեւ աշխատաւոր Միաբան:

Թաղման կարգը կատարուեցաւ Զորեքշարթի 10 Փետրուարի առաւտուան, նախապաշտեմամբ Գեր. Տ. Սուրբէն եղաւ. քէմհաններ, Ներկայ էին բոլոր վարդապետ հայրերը, վերջին տեղում ըլլալով իրենց յարգանքի տուրքը վճարելու Ս. Աթոռոյ 58 տարիներ իր անձնուէր ծառայութեամբը խնդրէ՝ այս բարի և աստուածալախ ծնունդին: Հանգուցեալին մարմինը ամփոփուեցաւ Զամ-Թաղի գերեզմանատան մէջ:

Տէրը թող իր յաւիտեական լոյսին արժանացնէ բարեպաշտ Նեւրուզեալի հոգին:

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆՈՐ

Շնորհակալութեամբ և օրհնութեամբ կ'արձանագրենք 1953 թուոյ ընթացքին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին տուած հետեւեալ բարեպաշտական նուէրներ:

1. — Բարիգործակ Տիկին Վալա խաչատուրեան, Ս. Յակոբայ սեղանին երկար փռոց մը ոսկեթիւ եւ արծաթաթիւ բանաւորով, ձեռամբ Հոգ. Տ. Սեբովրէ վրդ. Մանուկեանի:

2. — Պուլնոս-Արէսէն Տիկին Մարիմա Յովակիմեան, Ս. Յակոբայ աւագ սեղանին Տերմակ ծածկոց մը, ինքնածեղագործ, ձեռամբ Հոգ. Տ. Սեբովրէ վրդ. Մանուկեանի:

3. — Հիւս. Ամբրիկայէն Տիկին Ալուանի Պարեհեան, Ս. Գլխաղբին ինքնածեղագործ սեղանի բորփուրայ մը (հրեշտակ կշիռ ի ձեռին):

4. — Պուլնոս Տիկին Արմինուհի Այնթապեան, մէկ մեծ և քարակ թրքական (սանաբըլ) ոսկեղրամ Ս. Գլխաղբի եւ կամ Ս. Աստուածամայ պատկերին ի Ս. Յակոբ:

5. — Պաղտատէն Տիկին Սառա Տրպէ Մանուկեան, Տերմակ ձեղագործ բորփուրայ մը. Ս. Յարութեան Տաճարին, ձեռամբ Պր. Մանուէլ Մաթևոսեանի:

6. — Հայէպէն Այնթապայ Տիկին Նէվրիկ Պաղտոյեան, քոօշէ գործ կտր բորփուրայ մը, Ս. Յակոբայ Տաճարին:

7. — Հայէպէն Օրթորդ վերմին Պաղտոյեան, մէկ Տերմակ բորփուրայ մը. Ս. Յակոբայ Տաճարին, ձեռամբ Տիկին Արարիկ կարապետեանի:

8. — Հայէպէն Այնթապայ Տիկին Սիւսանոյ Սրբմայեան, մէկ ոսկի կարմիր բորով մասանի, Ս. Աստուածամայ պատկերին որ ի Ս. Յակոբ:

9. — Կիսրոսէն Արսլանպէկչի Տիկին Ովսաննա Պորոս, մէկ Տերմակ տեղագործ ծածկոյթ, աւագ խորանին Ս. Յակոբայ, ձեռամբ Պր. վարդէս Պատմանեանի:

10. — Մարաշցի Տիկին Թագուհի Մայախեան, մէկ կտր տեղագործ բորփուրայ Ս. Գլխաղբին:

11. — Մարաշցի Տիկին Մարի Գ. Գագանեան, Ս. Յակոբայ աւագ խորանին մէկ ինքնագործ լաւ Տերմակ ծածկոց մը:

12. — Մարաշցի Ս. Աթոռոյ Միաբան Ռարա. կիր Արամ պապա Սէրայտարեան. Ս. Յարութեան Տաճարին մէկ ձեռք լման ժամադրի զգեստ, և Ս. Գերեզմանի համար մէկ ծածկոյթ-փռոց մը: Գարծնալ, Ս. Գերեզմանի հրեշտակի վէմին ծածկոց մը, և վարազայր մը Ս. Յովհաննու մատրան աւագ խորանին:

13. — Այնթապայի Էլիզ Մայրապետ Մամեան, մէկ շուրջաւ. մէկ փորութար և զոյգ մը քաղպան, Ս. Հրեշտակապետաց Նիկիցիցին:

14. — Երուսաղէմ Մարաշցի Տիկին Վարսենիկ Համբարձեան, մէկ սեղանի կապոյտ խալով բրէ մծածկոյթ մը Ս. Յակոբին. լիւթ գործ խաչի երկար բորփուրայ մը և բանի մը հատ ալ մանր մեղրամոմեր:

15. — Երուսաղէմէն Համբարձեան Համբարձեան և Սիմակիլ Նազրեան Ս. Յակոբայ Տաճարին մէկ շուրջաւ, երկու փորութար և զոյգ մը քաղպան ու սրբիչ մը ժամադրի, որպէս ուխտ իրենց Յակոբ Նազրեան սրբոյն:

16. — Ամանէն Տիկին Պերճուհի Ռուսեան, Ս. Գլխաղբի Տերմակ սեղանի ծածկոց մը:

17. — Երուսաղէմէն Զէյթունցի Տիկին Եղիսաբեթ Կ. Անդրեանեան, ձեղագործ ծածկոց մը Ս. Գլխաղբին:

18. — Էաֆայէն Օրթորդ Մեհրուպէ Զարարեան, Տերմակ ծածկոց մը Ս. Գլխաղբին:

19. — Թեհրանեան Տիկին Արարիկ Եղիա Արարամեան, Ս. Յակոբայ Տաճարին սեղանի ծածկոց մը, երեք բորփուրայ և մէկ մասի ծածկոց:

20. — Պուլտարակ Կեսարացի Տիկին Երջանիկ Գագանեան, նորը տեղագործ աւետարանի բրանիչ մը Ս. Յակոբայ:

21. — Պուլնոս Տիկին Եւանդ Օղուլուրեան մէկ ոսկեթիւ ձեղագործ փռոց մը Զրիստոսի Ս. Գերեզմանի Հրեշտակի բարին:

22. — Պուլնոս, Տիկինայր՝ Զրիստինէ Գաբրիելեան՝ Տերմակ փռոց մը — Ովսաննա Տալեան՝ (պատարազ) անձեռոց մը — Ամէլ Էնֆիլեան՝ խաչի բռնիչ մը — Արշալոյս Ն. Սագմանեան՝ բորփուրայ մը — Մարի շահման Տէլիբմանեան՝ խաչի բռնիչ մը — Մարի շահման՝ սեղանի ծածկոց մը:

23. — Պլյուսթարակ Էաֆայի Օր. Մանուկ Մելիքեան, Ս. Գլխաղբի Սեղանին կը նուիրէ Տերմակ ծածկոց մը. ձեռամբ Օր. Գոհարիկ փամպուրեանի (1953 Յուն. 10):


Լուսարարակա

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՍՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

تصدرها - بطريقه الارمن الارثوذكس مدير المطبعة - الآب زاوین شنتیان تطبع في مطبعة دير الارمن - القدس العدد ٢

نمبر ١٩٥٤

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Zaven Chinchinian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.



ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

(ՀԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻԻ 574-Ա)

ՆԱԽԱԿ ՆԱԽԱԿԱԼ ՏՈՒԱՅԹ Տ. ԱՅԶԸՆԸ ԱՌԻՐԻ
ԹՈՒՐԲՈՅ ՆԱԽԱԿԱԼ ՏԵԼԻԱԼ ՊԱՅՄԱՐԻ ԱՄԵՐԻԿԱ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻՐԻ

Թուրքիոյ Նախագահ Տելալ Պայաթի Յունուար 27ին Ամերիկա սոյեւթեան առթիւ
հետեւեալ նամակը յղուեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգաց Նախագահին:

Նախագահ ՏՈՒԱՅԹ Տ. ԱՅԶԸՆԸ ԱՌԻՐԻ
ՈՊԵՏԱԿ ՏՈՒՆ
ՈՒԱՇԻՆԳՏՈՆ ՏԻ. ՍԻ.

Յունուար 25, 1954

Սրբիւի Պր. Նախագահ,

Միացեալ Ազգերու Ընդհանուր Ժողովին ուղղած Ձեր ուղերձէն ի վեր, որով կ'առաջարկէք միջազգային համագործակցութիւն՝ ախտահան ուժը օդատարածելու ի նպատակ խաղաղ նպատակներու, մենք նորարարած յայտով կ'ազնկալէինք Ձեր առաջնորդութեան տակ տեսնել համաշխարհային լարուածութեան թուլացումը և քաղաք ու տեղական խաղաղութեան մը վերջնական հաստատումը: Այսուհանդերձ, յուսաւոր եղանք երբ լսեցինք թէ հրաւեր ուղղած էք Թուրքիոյ Նախագահ Պր. Տելալ Պայաթին մեր երկիրը այցելելու իրեն Ձեր հիւրը, Պր. Պայաթի իր պաշտօնին բերմամբ, աշխարհի բոլոր Հայերուն համար խորհրդանշել է շարին՝ որ մեր ազգը հասցուց քննադատութիւններէն ետքը:

Առ ի գնահատութիւն այն կարեւոր դերին զոր Հայերը խաղացին յօգուտ քաղաքակրթութեան զարգացման, ինչպէս իրենց հերոսական մասնակցութեամբ Առաջին Համաշխարհային Պատերազմի յաղթանակի գործին մէջ, Ձեր պատուարժան նախորդներէն մին՝ Նախագահ Վուտթը Ուիլսոն, անվերապահօրէն շնանց անոնց համար ապահովել զոնէ նուազագոյն արդարութիւն մը, և 1920ին, իրեն պետը Դաշնակից Տէրութեանց Գերագոյն Խորհուրդին, իրականութեամբ միշտ մը Հայերուն կը վերադարձնէր Կարսի, Արտասանի, Վանի, Պիժիլիի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգները, որոնք ամէնքն ալ տակաւին կը մնան Թուրքիոյ քաղաքական սահմաններուն մէջ:

Ըստ մեր տեղեկութեանց, Պր. Պայաթ Ձեր անձնական հիւրը պիտի ըլլայ Ոսկեայ Տան մէջ, մեր փափաքն է, Պր. Նախագահ, որ հաճիք իրեն հարցնել թէ ինչ եղան 2½ միլիոն Հայերը, որոնք Թուրքիոյ մէջ կ'ապրէին Առաջին Համաշխարհային Պատերազմէն առաջ. հարցնել թէ, ինք կամ իրմէ առաջ ուրիշ ոեւէ թուրք կառավարական պատասխանատու պաշտօնատար որեւէ կերպով հերքէր է երկուք ու կէս միլիոն Հայ քրիստոնեաներու նախամտածում ու ծրագրումը ջարդին պատասխանատուութիւնը, զոհոյսին քարաք մը որ դատապարտուած է ընդհանուր քաղաքակրթութեան խախտման: Թէ ինք կամ իր նախորդները ինչ միջոցներ գործածած են զործադրելու համար Առաջին Համաշխարհային Պատերազմի մեր մեծ Նախագահին իրաւարարական վճիռը:

Մ. Նահանգներու արդար ու մարդասիրական քաղաքականութիւնը զեպի Հայ ժողովուրդը, որ այնքան որոշապէս իւրեղեացած էր Ուիլսոնի իրաւարարական վճիռով, հակաընկերացաւ Թուրքիոյ մենեան վարդապետութեան հռչակումով, որ զժրատաբար տակաւին ի դժբախտ կը մնայ, Այս նոր քաղաքականութիւնը Միացեալ Նահանգները կամաւորապէս մեղսակից զարեւոյց անարդարութեան մը, որ մինչև այդ ատեն կրնար միայն ակամայ եղած ըլլալ:

Ամերիկահայ Ազգային Խորհուրդը այն ատեն յայտարարեց թէ այսպիսի քաղաքականութիւն մը ի վերջոյ չէր կրնար նպաստել մեր երկրի շահերուն: Մեր կասկածը զժրատաբար իրականացաւ և ակնկալուածէն շատ աւելի կանուխ: Վերստին կը յայտարարենք, թէ Միացեալ Նահանգներու զինեալ ուժերը գործածել ի պաշտպանութիւն բացայայտ անարդարութեան մը և բռնակալութեան զինեալ մը, ընդգէմ խորապէս քաղաքակրթութեան հինաւորեց ժողովուրդի մը, որպիսին են Հայերը, պիտի չեն նպատակ: Ամերիկեան ժողովուրդի լաւագոյն շահերուն, ո՛չ ներկայիս և ո՛չ ալ ապագային մէջ: 1894-1922ի զանգուածային ջարդերը և մասնաւորապէս ցեղասպանութեան ծրագրերը՝ զոր Թուրքիոյ յաջորդող Հայոց զէմ 1915ին, տրամաբանական և ընդունուած նախնութեամբ եղաւ նացի ցեղասպանութեան յայտարարին, որ գործադրուեցաւ 1933-1945ին, երբ Եւրոպայի մէջ, Ձեր հեղինակութեամբ հրամանատարութեան տակ Երկրորդ Համաշխարհային Պատերազմը վերջ տուաւ. միլիոնաւոր անմեղ ու անօգնական ժողովուրդներու զանգուածային սպանդին:

Մարդկութիւնը չենք Նացի սարսափին, ո՛չ ալ աւարին, որ այդ սարսափին միջոցաւ կուտակուեցաւ ժամանակ մը: Ան առ յաւէտ պիտի չենք ինչ որ Թուրքիոյ ընդունուած Հայ դատաւարութեան, — Կարսի, Արտասանի, Վանի, Պիժիլիի, Էրզրումի և Տրապիզոնի, — յիշատակելով հոս միայն ինչ որ կը վերաբերի Ուիլսոնի իրաւարարական վճիռին:

1954-Ի «ՍԻՈՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Երուսաղեմէն

Գեր. Տ. Սուրբէն Եպո. Բէմհանձեան՝
Ուրարակիր Տիր. Յովսէփ Մամուր՝

Տօքթ. Լ. Համարձու մեանին (Փարիզ),
Կարտինալ Էօթէն Թիւէրանթի (Հռոմ),

Ամմանէն

Տիար Սեդրաք Լափանձեան՝

Հոգ. Տ. Արտաւազդ Արզ. Թրթրեանի
(Անթիլիաս),

ՎԱՍՆ ԲԱՐԳԱՒԱՋՄԱՆ «ՍԻՈՆ»Ի

Սան Սալվատորէն, Մեծ. Տիար Էլիաս Պանահա, կը նուիրէ 250 միլի
վասն բարգաւանման «Սիոն»ի:

Կը յայնմեմ մեր ջերմ շնորհակալութիւնները մեծայարգ նուիրատւին:

Վարչութիւն «Սիոն»ի

Աւստի, կոչ կ'ընենք ձեզի, Պր. Նախագահ, որ յետս կոչէք Միացեալ Նահանգաց անարգար
ու վտանգաւոր քաղաքականութիւնը, որով անոր զինական ուժի օժանդակութիւնը կը տրուի
հրէշային շարիքին, որ ոչ միայն միլիտանտը Հայեր զրկեց իրենց կեանքէն, այլև վերապրողներէն
խից նաև իրենց երկրի ինը տասներորդը:

Ամերիկայի համար միակ շիտակ ճամբան, միակ ճամբան որ խաղաղութիւն և տեական բար-
գաւանում ու երջանկութիւն պիտի բերէ մեր ժողովուրդին և աշխարհի ժողովուրդներուն, արդա-
րութեան և մարդասիրութեան ճամբան է: Հայերու պարագային՝ ատիկա պիտի նշանակէ վերա-
դարձը վերոյիշեալ Հայկական գաւառներուն, կը հաւատանք թէ մենք կը խօսինք դարբու մեծ
մարգարէներուն և պետական մեծ մարդոց համարիտ տեսիլքովը, ինչպէս նաև անցեալ 300 տարի-
ներու մեր գեմոկրատական աւանդութեանց ոգիովը, որոնք Ամերիկան հասցուցին իր օրհնութեան
գաղաթնակէտին և մինչև 1947 թուի գարնան թրքանպատ քաղաքականութեան ընդդրկումը, զայն
զարժուցին աշխարհի մէջ մեծապէս յարգուած ու սիրուած երկիր մը: Միայն հինգ տարի առաջ,
20.000 թողքական եկեղեցականներ կոչ ըրին մեր կառավարութեան, որ իր նեղինականոր ձայնը
լսելի դարձնէ Միացեալ Ազգաց Կազմակերպութեան մէջ, անոր ներկայացնելով և ջատագովելով
Հայ ժողովուրդի արդար պահանջները: Անոնց ստորագրած կոչը կը գտնուի մեր պետական Քա-
րտուղարութեան զխանատան մէջ: Այդ թուղթը կը ներկայացնէ Ամերիկայի հարազատ ձայնը:

Կը յուսանք, Պր. Նախագահ, թէ Պր. ձեզի Պայարի այցելութիւնը պիտի օգտագործէք,
սկիզբը զննելով մեր արտաքին քաղաքականութեան մէջ նոր դարձակէտի մը, վերանորոգելով գոր-
ծան ջատագովումը Հայ ժողովուրդի արդար զատին, ժողովուրդ մը՝ որ աւելի քան հարիւր տարի
վայելցը Ամերիկեան ժողովուրդի համակրութիւնն ու բարեկամութիւնը, և պիտի առաջնորդէք մեզ
ամէնքս արդարութեան, մարդասիրութեան և տեական խաղաղութեան ճամբով:

Զերդ Զարգան քննելով

Ի դիմաց Ամերիկեայ Ազգային Խորհուրդին

ՕԳՄԷՆ ՍԱՐԵԱՆ

ԱՐԵԱԻՐ ԵԱՄԷԼԱՆ

Աճեցապէս

Քարտուղար

ԵԶԵԻԿ Կ. ԱԶՆԱԿԵԱՆ

ՏԳՈՐԷՆ